

Վ. ՅԱ. ԶԱԳՈՐՍԿԱՅԱ, Պ. Ն. ՅԱԿՈՎԼԵՎ

ՅԵՐԿՐԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԳԻՐԲ

ԱԶՈՎ-ՍԵՎԵՐՈՎՅԱՆ ՅԵՎ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՅԵՐԿՐԱՄԱՍԵՐԻ
ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԳՐԱԿ I



491.99-8

Զ-13

ԱԶՈՎ-ՍԵՎԵՐՈՎՅԱՆ ՅԵՐԿՐԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ 1934



2348

1 0 0 5 - 1 0

Վ. ՅԱ. ԶԱԳՈՐՍԿԱՅԱ, Դ. Ն. ՅԱԿՈՎԼԵՎ

491.99-8
2-13

ՅԵՐԿՐԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԳԻՐԳ

ԱԶՈՎ-ՍԵՎԾՈՎՅԱՆ ՅԵՎ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՅԵՐԿՐԱՍԱՍԵՐԻ
ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՊՐԱԿ ԱՌԱՋԻՆ

ՈՒՍՈՒՑՄԱՆ I ՅԵՎ II ՏԱՐԻՆԵՐ

ՔՈՒՅԼԱՏՐՎԱԾ Ե ՌԱՖԵՀ
ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏԻ ԿՈԼԵԳԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ

ՔԱՐԳՄԱՆՈՒՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏՎԱԾ Ե ԱԶՈՎ-ՍԵՎԾՈՎ-
ՅԱՆ ՅԵՐԿՐԱՅԻՆ ԼՈՒՍԲԱԺՆԻ ՎԱՐԻՋԻ ԿՈՂՄԻՑ

ՅԵՐԿՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ


Բ ա ժ ի ն ն ե ռ ի հ ե դ ի ն ա կ ն ե ռ ը. — Հասարակագիտութիւնն՝ Պ. Ն.
 Յակովլեվ: Բնագիտութիւնն՝ Վ. Յա. Զագորսկայա: Հասարակատեան
 բաժինը կազմելուն մասնակցել ե ընկ. Ա. Վ. Պետրովսկայան:
 Խմբագրութիւնն՝ Հ. Պոտենցի:
 Թարգմանութիւնն՝ Գ. Գեվորգյանի, Վ. Շվարզի:



3335
 41

Ответственный редактор Г. А. ПОТЕНЦ
 Тех. редактор О. ТЕР-ДВЫДОВ
 Рисунки и обложка В. Д. Бирюкова
 Издание 303/3881—У. Об'ем 4,75 печ. лист. Тираж 2500. Сдано в производство 21 мая 1934 г.
 Подписано в печать 11 июня 1934 г. Статформат А5-148x210, Уполкрайлит Б-3924. Зак. № 2733.
 Тип. им. «Стачки 1902 г.» АЧКПО Ростов н-Дону

ԶՄԵՌ



Մեզ մոտ անձրևն առավոտյան
 Լուսամուտն ե միշտ ծեծում.
 Գետնի յերեսին մառախուղը,
 Ամպերի պես բարձրանում:
 Կեսորին անձրևը դադարեց
 Յեվ, վորպես սպիտակ փետուր,
 Աշնանային ցեխերի վրա
 Զյունն առատ թափվել սկսեց:

ԶԶԱԶՈՂՎԵՑ

Վաչիկն առավոտյան արթնացավ: Տեսավ՝ բազմա
 արդեն սպիտակել էր: Զյունը ծածկել էր ճա-
 նապարհը:
 Նա վազեց իր սահնակը բերելու:
 Վաչիկը հագրվ կարգի բերեց իր սահնակը, տե-
 սավ, վոր ճյունն արդեն հալչում ե: Այնպես ել
 Վաչիկին չհաջողվեց սահնակով ման գալ:

ՄԵՐ ՉՄԵՌԸ

Չարմանալի ձմեռ է մեզանում: Կամ ցուրտ է, կամ տաք, կամ ձյուն է գալիս, կամ անձրև: Չմեռը մեզ մոտ հաճախ է լինում սառուկ: Գետինը ծածկվում է սառցե կեղեվով: Այն ժամանակ դժվար է լինում քայլել:

ԲՈՒՔԸ ՏԱՓԱՍՏԱՆՈՒՄ

Այսոր առավոտյանից տաք էր, պարզ և հանդարտ: Հետո սաստիկ ձյուն յեկավ, փչեց քամին, բարձրացավ ձյան թանձր փոշի: Տափաստանում բուքն սկսեց կատաղի կերպով աղմկել:

Անցյալում բուքի ժամանակ, ցրտի և սովածության պատճառով, տափաստանում շատ անասուններ ելին կոտորվում:

Այժմ կոտորածություններում կովերին և վոշխարներին բշտում են կայանները: Բուքի ժամանակ նրանց ավելի շատ կեր են տալիս:

Հիմա նրանց համար սարսավելի չեն ցրտերն ու բուքը:

Լուծիբ. — Սալանով սպիտակ տափաստանն է ծածկված:

ԱՂՎԵՍԸ ՈՒ ԺԱՆՏԱՔԻՍԸ

Աղվեսների և ժանտաքիսների համար ձմեռը լավ չէ: Նրանք ուտելիքի պաշար չունեն: Վորսը դժվարությամբ են գտնում:

Պոնտական մկները բնում են իրենց բներում:

Խորը բնում են նաև մողեսներն ու ոճերը: Թագնավել են իրենց խոր բներում մկները:

Աղվեսն ու ժանտաքիսը ձմեռն ավելի մոտ են գալիս բնակարաններին: Հաճախ մտնում են հավաքները: Գողանում տանում են հավերին, բաղերին և սագերին:




ԱՂՎԵՍԸ ՈՒ ՄՈՒԿԸ

Դաշտային մուկը ձմեռը կուշտ է ապրում:

Նա իր բույնը շատ հասկեր և հատիկներ է կրել:


Մուկն առավոտյան արթնացավ: Հատիկները կրծեց և վազեց ման գալու: Հանկարծ վորտեղից վոր եր գուրս թռուավ աղվեսը: Թաթերով բռնեց մկան և կերավ:



ՎԱՅՐԻ ԹՈՉՈՒՆՆԵՐԸ ՉՄԵՌԸ

Աշնանը մեզնից շատ թուշուններ հեռացան: Իսկ սպիտակակտուց սերմնագուպները մնացին մեզ

մոտ ձմեռելու: Նրանք սնվում են հատիկներով, մկներով և ամեն տեսակ սատկած անասուններով:



Արոսներ

Մեզ մոտ մնացել են ձմեռելու նաև դաշտային արտուտները: Նրանք իրենց համար հավաքում են հատիկներ և տափաստանային սերմեր:

Տափաստաններում թափառում են խոշոր թռչուններ — արոսները: Առավոտյանից մինչև յերեկո նրանք փնտռում են հատիկներ և տափաստանային սերմեր:

Սեվ ԾՈՎԻ ԱՓԵՐԻՆ

Սև ծովի ափերին համարյա ձմեռ չի լինում: Բարձր լեռները լավ պաշտպանում են այդ տեղերը սառը քամիներից: Յերբեմն ձյուն է գալիս և իսկույն հալչում: Իսկ փետրվարի վերջին այստեղ արդեն բոլորովին տաք է: Փայլում է պայծառ արևը:

Բայց ահա փչում է ծովային քամին: Յերկինքը դառնում է մոխրագույն: Գալիս են հորդ անձրևներ: Ծովում փոթորկվում են ալիքները:

Անցնում է մի քանի օր և նորից փայլում է պայծառ արևը:

ԳԱՐՈՒՆ

ԳԱՐՆԱՆ

Պայծառ արևը տաքացրեց: Մեկ անգամից օրը տաքացավ, հոսեցին առվակները: Իոն գետի սառույցն սկսեց հալչել:

Ճնճղուկները բաղերում ուրախ ծլվում են: Սև սպիտակահոտուց սերմնագուռները հպարտ հպարտ ման են գալիս ձանապարհներին: Աղբակույտերի վրա թռչկոտում են կաշաղակները: Ծառերի վրա բարձր ձայնով կանչում են սկյուռները:

ՏԱՓԱՍՏԱՆՈՒՄ

Ուրախացիր, գարուն է գալիս,
Կռուկները յերամն է թռչում,
Վոսկե շողերի մեջ օրն է հանգչում
Յեվ ձորակում առվակները կարկաչում:

ԱՌՎԱԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Արեգակը տաքացրեց: Լեռներից և տափաստաններից հոսում են պղտոր, փրփրած առվակները: Նրանք բջջում են գառիվայրերում և առուներում:

Արագ փլչում է փխրուն հողը: Զուրը բշում, տանում է ավազն ու կավը: Առուն դառնում է ավելի յերկար և լայն: Հետո նա դառնում է ձորակ:

Չորակները դաշտերում փչացնում են լավ հողերը և ճանապարհները քանդում: Կոլտնտեսականները ձորակներում թփուտներ են տնկել: Չորակն այլ ևս չի լայնանում և լցվում է հողով:

ՎԵՐԱԴԱՐՉԱՆ ՏԱՔ ՅԵՐԿՐՆԵՐԻՑ

Վաղ գարնանը Սուրբիկը հաճախ լսել էր, թե ինչպես տղաներն ասում էին.

- Ծովային սագեր են թռչում:
- Այս գիշեր թռչում էին կարապները:
- Բազերը յեկան:

Մեկ անգամ Սուրբիկն առավոտյան արթնացավ և լսեց սարյակների յերգը:

Նա վազեց տղաներին հայտնելու, վոր սարյակները յեկել են:

Բայց տղաներն արդեն զխտեյին այդ մասին:

Սուրբիկը հարցրեց նրանց.

- Իսկ վորտեղից են յեկել սարյակները:
- Տաք յերկրներից, — պատասխանեցին տղաները:

Իրանից յերկու շաբաթ հետո յերևացին ճանճերը և վերադարձան ծիծեռնակները:

— Սուրբիկ, ասա տեսնենք, վորտեղից յեկան ճանճերը, — հարցրին նրան տղաները:

— Տաք յերկրներից, — պատասխանեց Սուրբիկը:


Ամենքը բարձր ծիծաղեցին:

ԴՈՆ ԳԵՏԻ ՎԱՐԱՐՈՒՄԸ

Դոնի վրայի սառույցն արդեն հալվեց: Չուրը սկսեց արագ կերպով բարձրանալ:

Դոնը դուրս յեկավ ափերից և հեղեղեց ստանիցան: Ուժեղ բամի փչեց:

Փողոցներում արագ հոսում էր Չուրը: Բնակիչներն անցնում էին կամուրջների վրայով և նավակներով: Գիշերը ստանիցայի ծայրին գտնվող տներից մեկը բոլորովին մնաց ջրի տակ: Այդ տան բնակիչները բարձրացան կտուրը և այնտեղ մնացին մինչև առավոտ: Առավոտյան ձկնորսները նավակներով յեկան և նրանց ազատեցին:



ՏԱՓԱՍՏԱՆԸ ԳԱՐՆԱՆԸ

Գարնանային արևը տաքացնում է: Բլրակների վրա արդեն յերևացին առաջին ծաղիկները: Ծաղկել են ձնծաղիկները, սոխուկը և ընձախոտը:

Չորերում և ձորակներում ծաղկել են վայրի խնձորենիներն ու տանձենիները:

Ծաղիկների վրա ուրախ թռչում են խայտաբղետ թիթեռները և տգտգում մեղուները: Քիչ ժամանակ էլ անցավ և տափաստանը ծածկվեց գույնզգույն ծաղիկներով: Բացվեցին կարմիր կալաչները: Լավ է գարնանը տափաստանում:

ԱՅԳԻՆ ԾԱՂԻԿՆԵՐԻ ՄԵՁ

Լցվում են արդեն բողբոջները շեփորուկի,
Վորպես ձյան մեջ կանգնած ծիրանիներ.
Տերևներ չկան և վոչ ել մի տեղ ստվերի,
Բայց գետակի վրա սպիտակել է այգին:

Ահա և սարորը և մամխին բացվեցին,
Շուտով բալենին ել այգում կծաղկի.
Տանձենին, խնձորենին բողբոջներ բացին.—
Գարնան արևը շերմուկ յուն կլթափի:

ՍՊԻՏԱԿ ԱԿԱՅԻԱ

Ակացիան հոտավետ
Ծաղկել է գարնան,
Յեվ շուրջը մեկ-մեկ
Բզգում է մեղուն:

ՄԵՐ ԽԱՂՈՂԸ

Դպրոցի պարտեզում կային խաղողի մի քանի
թփեր: Ամբողջ ձմեռվա ընթացքում այդ թփերն
արև չտեսան: Աշնանը նրանց հողով ծածկեցին՝
ձմռան ցրտերից պաշտպանելու համար:

— Վաղը մենք խաղողի թփերը հանելու յենք
հողի տակից, — ասաց յերեխաներին ուսուցչու-
հին:

Մյուս որը նրանք բահերով գնացին պարտեզ
և խաղողի թփերը հողի տակից զգուշութամբ
հանեցին:

— Նայեցե՛ք, նայեցե՛ք, բողբոջներն արդեն
ուռչել են, — ուրախ կանչեց Վանիկը:

— Ուրեմն մեր թփերը չեն սառել, — ասաց
Սաթիկը:

Յերեխաները թփերը կապեցին ձողերին և
կտրեցին չոր ճյուղերը: Յերկու որից հետո խա-
ղողի թփերի վրա յերևացին մատղաշ կանաչ
տերևներ:

ՊԱՐՏԻՉԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԸ

Առավոտյան ցողի հետ
Պարտեզ մտավ Նազիկը,
Լսեց ուրախ ճլվլուն
Թռչունների աղմուկը:

Նայիր, վորքան սարյակներ
Թռչկոտում են պարտիզում, —
Այ դուք փոքրիկ իմ ընկերներ,
Միրուն, թմբիկ թռչնիկներ,

Սուր կտուցով ջարդեցե՛ք
եղ վորդերին աներես. —
Կեցցե՛ք փոքրիկ հերոսներ,
Մեր պարտիզի պաշտպաններ:

ԱՇՈՒՆ



ԱՇՆԱՆԸ ՏԱՓԱՍՏԱՆՈՒՄ

— Այսօր մեր խումբը գնում է տափաստան, — ասաց Բաբկենը:

— Իսկ այնտեղ ի՞նչ էք անելու, — հարցրեց նրան մայրը: Չէ՞ վոր այնտեղ արդեն ամեն ինչ չորացել է:

— Յերբ վերադառնամ տուն, այն ժամանակ կիմանաս, — հպարտութեամբ պատասխանեց Բաբկենը:

Շատ լավ առավոտ էր: Յերկնքում վոչ մի ամպ չկար: Յերեխաներն ուրախ քայլում էին և յերգում:

Ահա և թփերը, ահա և դաշտը: Ամբողջ գետինը ծածկված է կանաչ խոտով:

— Նայեցեք, յերեխաներ, թե ինչպես աշնան անձրևներից հետո կենդանացել է դաշտը, — ասաց ուսուցչուհին: Այժմ ուշադրութեամբ նայեցեք, թե ինչպիսի խոտեր են ծաղկել:

Յերեխաները ցրվեցին ամեն կողմ: Հավաքում էին աշնանային ծաղիկներ, վազում էին պոնտական մկների և մողեսների հետևից: Նայում էին, թե կոլտնտեսականները դաշտերից ինչպես են կրում վերջին արևածաղիկը և յեզվպտացորենը:

Բաբկենը շատ գոհ վերադարձավ տուն: Նա հետը բերեց կուբանջարների, կապույտ տերեփուկների և փետրախոտերի մի մեծ փունջ:

ՅԵՐԻՆՁԱԿ

Տափաստանում ծաղկաթափ յեղան կաղանջանները և տերեփուկները: Բամին փչեց, արմատախիլ արեց նրանց: Այդ բույսերը կպան իրար, կազմեցին անագին գնդեր:

Բամին նրանց քշեց: Գնդերը թռչկոտեցին տափաստանում և շաղ տվին սերմերը:

Այդ գնդերը կոչվում են «յերինջակ»:

ԱՅԳԵԿՈՒԹ

Ոգոստոսի վերջին շատ շոգ էր: Արևը սաստիկ այրում էր: Խաղողի այգիներում շատ ուրախ էր: Սկսվեց այգեկուլները:

Հայն տերևների տակից, այստեղ ու այնտեղ սևին էյին տալիս հասուն խաղողի ծանր վողկույնները: Կոլտնտեսուհիները քաղում էին խաղողը և լցնում զամբյուղները:




Յերեխաները նույնպես զբաղված էին աշխատանքով: Ոգնում էին: Խաղողը փոխադրում էին զամբյուղների մոտ և լցնում նրանց մեջ:

Ամբողջ որը, գեպի կոլտնտեսութուն տանող ճանապարհով, անցնում էին խաղողով բեռնավորված բազմաթիվ սայլերը:

ԲԱՄԲԱԿԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՎԱՔՈՒՄԸ

Պայծառ և յերաշտ որեր են:

Բամբակենու բոժոժներն արդեն կարմրավուն են դառել, իսկ շատերը հասել և բացվել են: Նրանց միջից դուրս են ցցվում փափուկ, ձյան պես սպիտակ բամբակի փնջիկները:



Առավոտը շատ վաղ դաշտում յեռում և համերաշխ աշխատանքը: Կոլտնտեսուհիներն արագ ու ճարպիկ կերպով հավաքում են բամբակը և դարսում կողովներում: Հետո շորացնում են բրեղենափ վրա, ջրկում են ըստ տեսակների և դարսում պարկերի մեջ:

Խորհանտեսություններն ու կոլտնտեսությունները շատ բամբակ են հավաքում և ուղարկում


են ֆաբրիկաները: Իսկ այնտեղ բանվորները բամբակից գործում են լավ չիթ, սատին և ուրիշ գործվածքներ:

ԲԱՆՉԱՐԱՆՈՑՈՒՄ

Յերեկ մենք գնացել էինք կոլտնտեսության բանջարանոցը: Իպրոցում ունենք Սուրեն Առաքելյան ազգանունով մի նոր ընկեր: Նա յեկել և մեզ մոտ ուրիշ յերկրամասից: Նա ուշադրությամբ դիտում եր իրեն անձանոթ բանջարեղենները:

Ճյուղավոր ցողունների վրա կախվել էին պոմիդորները: Հեռվից յերևում էին մանուշակագույն բաղրիջանները և կանաչ պղպեղները:

Մենք Սուրենին պատմեցինք, վոր այդ բանջարեղենները գործ են ածվում կերակուրների համար: Նրանցից գործարաններում պատրաստում են համեղ պահածոներ: Պոմիդորներն ուտում են հում-հում:




Պղպեղ Պաղրիջան Պոմիդոր

Բանջարանոցում կային նաև շատ ուրիշ բանջարեղեններ: Այստեղ կար ձակնդեղ, գազար և մաղղանոս: Քիչ հեռու գտնվում էին լոբու և սիսեռի մարգերը:

ԿՌՈՒՆԿ

Անցյալ ամառ Բարսեղը ձորակում բռնեց կոունկի վիրավոր մի ձագ: Բերեց տուն և կապեց նրա վիրավոր վոտքը: Սկսեց խնամել նրան և լավ կերակրել:

Շուտով նրա վոտքը լավացավ և նա սկսեց բայլել ամեն կողմ: Քայլում և խրճիթում. կարծես պահապան լինի:



Դուրս ե գալիս փողոց և հպարտ քայլում և հավերի հետ:

Ամենքը սովորեցին նրան և սիրեցին:

Այդպես անցավ ամառը: Յեկավ աշունը: Կոունկը քայլում եր փողոցում և տեսավ թռչող կոունկների շուն, վորոնք ձայն էին տալիս: Կոունկը նրանց նայեց, վազեց, թափահարեց թևերը և թռավ նրանց հետ:

Բարսեղը տեսավ, սկսեց կանչել.
— Կոունկ, կոունկ, կոունկ:
Բայց կոունկը չվերադարձավ:


ԹՈՒՉՈՒՆՆԵՐԻ ՉՈՒՆ

Լողում են գորշագույն յերկնքով
Աշնանային ամպերը տխուր,
Նրանք մեկնում են անվերադարձ
Դեպի հարավ, հեռուները լուռ:

Յերամ յերամ թռչուններն աղմկոտ
Սլանում են շտապ նրանց հետևից.
Բայց մեզ հայտնի յե շարանը ծանոթ,
Հետ կզան ուրախ գարնանը նորից:

ԲՈՍՏԱՆՈՒՄ

Աշուն ե: Բոստանում հավաքում են հասուն վոսկեգույն
սեխերը և խոշոր հյուսթալի ձմերուկները: Այնտեղ արևի տակ
հասունանում են խոշոր դդումները: Սրանք կհավաքվեն ավելի ուշ:



Մեծ տղաները դպրոցի պարապմունքներից հետո ոգնում են
բերքը հավաքելու: Փոքրերը նույնպես զբաղված են: Պետք է
սեխերի և ձմերուկների մոտից քշել սերմնագառավներին, թե չե
նրանք կկտցահարեն ամենաքաղցր սեխերը և ձմերուկները:

Ձմերուկները և սեխերը բոստաններից փոխադրում են կու-
տնտեսություն:

Նրանցից մեծ քանակությամբ կուտնտեսություններն ու-
ղարկում են քաղաք:

ԶՎԱՐՃԱԼԻ ԽԱՂ

Յերեխաները մտածեցին մի զվարճալի խաղ:
Մեկը տալիս է բույսի անունը, իսկ մյուսները պետք է
արագ ասեն, թե նրա վոր մասն է գործածվում կերակրի
համար:

Մինասն ասաց՝ «կաղամբ»:

— Տերևները, տերևները, — գոռացին ամենքը:

— Իմացաք: Ուտում են կաղամբի տերևները:

Հետո մինասն ասաց՝ «սալաթ»:

— Տերևները, տերևները, — բարձր ձայնով պատասխանեցին
յերեխաները:

Իսկ այժմ՝ «պոմիդոր», — ասաց Մինասը:

Ամենքը գոռացին:

— Պտուղները:

Իսկ Սոֆիկը գոռաց՝ «տերևները»:

— Ախ Սոֆիկ, Սոֆիկ, լավ ծիծաղեցրիր ամենքին: Մի՞թե
պոմիդորի տերևներն ուտում են:

3335
411

ՄՈՂԱՆՈՏԵՐ

Դպրոցի բանջարանոցում վաղուց հավաքել են բանջարե-
ղենը: Չորացան և դեղնեցին բույսերի ցողունները: Իսկ նրանց
արանքներում ցցվել էյին մուլախոտերը:

Ամենից շատ աչքի յե ընկնում տատասկը: Նրա ծակող
տերևներն ու ծաղիկները նույնպես դեղնել էյին:

Տեղ-տեղ քամուց թեքվել էյին հասարակ սեղի հասկերը և
սպլտակին էյին տալիս դաշտային պատուտակի ծաղիկները:

Սյդ բոլոր բույսերը մեծ վնասներ են հասցնում բանջարա-
նոցներին: Գարնանը նրանց մատղաշ ճյուղերի վրա յերևում



են փաստաբան միջատներ: Սրանք սկսում են ուտել բանջարեղենների տերևները:

Յերեխաները վորոշեցին բանջարանոցը մոլախոտերից մաքրել: Արմատահան արեցին մոլախոտերը և դիզեցին: Բանջարեղենները:



Պատուտակ



Հասարակ սեղ



Տատասկ

րանոցի հողը վարելուց հետո հավաքեցին մոլախոտերի արմատները: Հավաքած մոլախոտերը և նրանց արմատներն այրեցին:

ՀՈՂԱՅԻՆ ԼՎԻԿՆԵՐ

Կաղամբի սածիլների և բողկի տերևների վրա մենք տեսանք զարնան փոքրիկ սև բզեզներ:

Այդ բզեզները բանջարանոցում ուտում են բույսերի տերևները: Վտանգից նրանք ազատվում են ցատկումներով: Այդ պատճառով ել նրանց անունը դրել են հողային լվիկներ:


Աշնանը լվիկները մտնում են հողի մեջ: Իսկ զարնանը նրանք դուրս են գալիս գետնի յերեսը և ապրում մոլախոտերի վրա: Յեթե աշնանը մոլախոտերն այրենք, բանջարանոցում լվիկներ չեն լինի:

ԽԼՐԴԱԾՂՐԻԴ

Ահա ճանապարհի վրայով սողում է մի ինչ վոր անձուռնի միջատ: Դա մեր բանջարանոցների խիստ փաստաբան և կատաղի թշնամի՝ խլրգածղրիդն է:

Խլրգածղրիդը հողի մեջ փորում է յերկար անցքեր: Ապրում է այնտեղ և սնվում է զանազան արմատներով և կարտոֆիլով:

Աշնանը յերեխաները թակարդ շինեցին: Բանջարանոցում փոսեր փորեցին և նրանց մեջ աղբ լցրեցին: Խլրգածղրիդները ձմեռելու համար սիրում են պահվել այդպիսի փոսերում: Շատ խլրգածղրիդներ հավաքվեցին այդ փոսերում: Այդտեղ ել նրանք վոչնչացվեցին:



ԿՈՒՏՆՏԵՍՍՅԻՆ ԱՅԳՈՒՄ

Աշնանային պարզ որ եր: Վաղ առավոտյան մենք գնացինք կոլտնտեսության այգին:

Այնտեղ արդեն յեռում եր ուրախ աշխատանքը: Կոլտնտեսականները հավաքում էին ուշ հասունացող տանձերի, խնձորների և սալորների բերքը: Պտուղներն զգուշությամբ ծառերից քաղում էին և տեղավորում նեղ, բարձր զամբյուղներում:

Մենք ման յեկանք ամբողջ այգին: Տեսանք զանազան ծառեր: Այստեղ կային՝ բալենիններ, ծիրանիններ, սալորենիններ:

Հանկարծ Լուսիկը ծափ տվեց և կանչեց.

— Բալենին ծաղկել է, բալենին ծաղկել է,

Մենք այդ սպիտակ ծաղիկներից մի քանի հատ պոկեցինք:


— Մեզ մոտ տաք աշուն լինելու դեպքում, բալենիններն ու ծիրանինները յերկրորդ անգամ են ծաղկում, — ասաց ուսուցչուհին, — բայց նոր պտուղ չեն տալիս: Յրտերը հասնելուն պես ծաղիկները թափվում են:

ԱՇՆԱՆ ԱՆՏԱՌՈՒՄ

Տաք, պարզ որեր էին: Անտառներում հասունացել էին շագանակները և կաղիմները: Յես, յեղբորս հետ, անհամբեր սպասում էի հանգստի որին: Հայրս խոստացել եր իր հետ մեզ լեռները տանել:

Հանգստի որվա նախորդակին մենք հավաքեցինք տոպրակները: Մթերքները տեղավորեցինք զամբյուղներում և գնացինք լեռները: Ուրախ բարձրանում եյինք լեռնային շավիղներով: Մեր շուրջը խիտ անտառ էր: Շուտով սկսեցին պատահել շագանակի և կաղնու ծառեր, վայրի խնձորենիներ և տանձենիներ: Ինչքան պտուղներ կային այդ ծառերի վրա:

— Ահա այստեղ ել կհանգստանանք, — ասաց հայրս:



Յեւ և յեղբայրս իսկուչն մագլցեցինք ծառը և սկսեցինք շագանակ և կաղին հավաքել:

Անտառում բոլորովին մթնեց: Մենք խարույկ վառեցինք և խորովեցինք կաղինները:

— Դե, յերեխաներ, պառկեցեք քնելու, — ասաց հայրս, — վաղը պետք է շուտ վեր կենալ:

Առավոտը մենք նորից գործի անցանք: Հավաքեցինք շագանակ, վայրի ընկույզ և խնձոր: Տանձերը և խնձորները շատ թթու եյին: Բայց ձմեռը նրանցից համեղ կամպոտ կպատրաստենք:


Որվա ընթացքում հավաքեցինք մի քանի տոպրակ: Իրիկնաղեմին յես ու յեղբայրս գնացինք տուն: Իսկ մեծերը մնացին մի քանի որ ևս:

Մեզ մոտ լեռներում, ամբողջ ձմեռվա համար չոր մրգերի պաշար են պատրաստում: Այդ մրգերից մեծ քանակութամբ հանձնում են և կոոպերատիվներին:


ԴՊՐՈՑԱԿԱՆ ՊԱՐՏԻԶՈՒՄ

Դպրոցական պարտիզում յեռում է աշխատանքը: Մեծ տղաները փորում են ծառերի տակը և կտրում չոր ճյուղերը:

Ծառերի կեղևների ձեղքերում պահվել են ծաղկակեր բզեզները և ուրիշ վնասատուները:



Մետաքսաբեր թիթեռ



Ծաղկակեր բզեզ

Պետք է կեղևները մաքրել: Ծառաքններին պետք է ամրացնել կաշուն թղթե ողակներ: Բզեզները և մյուս միջատները կբարձրանան կեղևի վրայով և կկաշեն ողակին:

Բայց ահա մի ինչ վոր մոխրագույն ողակ կա ճյուղի վրա: Ամառն ողակավոր մետաքսաբեր թիթեռը կպցրել է այդտեղ իր ձվիկները:

Ծառի ճյուղերի վրա տեղ-տեղ մնացել են չոր տերևներ: Նույնիսկ ուժեղ քամին չի կարողանում նրանց պոկել: Այդ տերևները փաթաթված են վոստայնով: Այդ տերևներից ամեն մեկը մեջ կան մեծ թվով փոքրիկ մոխրագույն վորդեր:

Դրանք վնասատու թիթեռների թրթուրներ են:

Յերեխաները հավաքում եյին այդ թրթուրներով տերևներն ու մետաքսաբեր թիթեռի ձվիկները և այրում խարույկի վրա:

ԻՆՉՊԵՍ ՊԱՏՐԱՍՏԵՑԻՆ ԽԱՂՈՂԻ ԱՅԳԻՆ ԶՄՈՒՍՆ

Ուշ աշուն եր: Յես հորս հետ գնացի կոլտնասուության խաղողի այգին: Այնտեղ խաղողը հավաքում էյին ձմռան համար: Խաղողի ճյուղերի չոր մասերն զգուշությամբ կտրում էյին: Թփերի տակից հանում էյին հենարանները:

— Դե, Վազգեն, — ասացին ինձ, — այժմ ոգնիր մեզ խաղողի ճյուղերը հավաքել և պատրաստել թաղելու համար:

Կոլտնասականները բահերով ակոսներ էյին փորում և զգուշությամբ տեղավորում խաղողի ճյուղերը: Նրանց վրա զգուշությամբ հող էյին լցնում:

Ամենամատղանները թաղելուց հետո խսիրներով ծածկեցին: — Այժմ խաղողի համար տաք կլինի և խաղողը ձմեռը չի սառչի, — ասաց հայրս:

ՊՈՒՐԱԿՈՒՄ

Մեր դպրոցից վոչ հեռու գտնվում է սովերոտ հին պուրակը: Հաճախ մեծ դասամիջոցները մենք անց ենք կացնում այնտեղ: Կազմակերպում ենք ուրախ պարեր և խաղեր:

Արձակուրդից հետո մենք նորից հավաքվեցինք դպրոցում: Հետաքրքիր է, ինչքան զանազան ծառեր կային պուրակում: Պուրակը դեռ կանաչ էր: Մենք վերսկսեցինք մեր խաղերը:

Ահա կաղամախիների ծառուղին: Արևի տակ փայլում են նրանց արծաթագույն տերևները. այնտեղ թմբենիները շրջան են կազմել: Մեջտեղում միշտ կանաչ են մեր կովկասյան յեղեղներիները: Նրանց ճյուղերը դասավորված են խիտ ասեղնավոր տերևներով: Շագանակի ծառերը տարածել են իրենց լայն տերևները:

Շավիղների կողքերից ձգվում են ցախակեռասենիների, հասմիկի և շեփորուկի շաքերը:

Հոկտեմբեր ամիսը յեկավ: Դեղնեցին թխկիների, շագանակի ծառերի և կաղամախիների տերևները: Նրանք թռչում են ողում և որորվելով թափվում են ճանապարհին:

Ակացիաների ճյուղերի վրայի պատիճներն արդեն ձաքճքել

են և նրանց միջից սերմերը թափվել: Թխկիներից և հացենիներից նույնպես թափվում են պտուղները:

Նրանք յերկար ժամանակ որորվում են ողում և դանդաղ ընկնում են գետին:

Մենք պուրակում շատ զանազան սերմեր հավաքեցինք:

Այդ բոլորը մենք պահեցինք մինչև ձմեռ: Ձմեռը ցրտերի և սառնամանիքների ժամանակ այդ սերմերով կկերակրենք թռչուններին: Թռչունները պուրակի բարեկամներն են: Նրանք գարնանը և ամառը շատ բզեզներ և թրթուրներ են ուտում:

ԻՆՉՊԵՍ ՄԵՆՔ ՔՇԵՑԻՆՔ ՆԱՊԱՍՏԱԿՆԵՐԻՆ

Ձմեռը յեկավ: Մենք կրկին գնացինք մեր պարտեզը: Յեվ ձյան վրա հանկարծ նկատեցինք նապաստակների հեաքեր: Տեղտեղ նրանք կրծել էյին մատղաշ խնձորենիների կեղևը:

Կեղևներին վնասել էյին և մկները: Մենք վազեցինք բահեր բերելու: Ձյունը հավաքեցինք ծառի տակ և սկսեցինք ամուր կոխտտել:

Այժմ մկները չեն մոտենա մեր ծառերին: Նրանք չեն կարող լավ կոխտտված ձյան տակ իրենց համար անցքեր շինել: Իսկ ձյան վրայով մկները յերբեք չեն վազում:

— Հապա նապաստակները, Ի՞նչ անենք նրանց դեմ: — Նրանց առաջն ել կառնենք, — ասաց ուսուցչուհին: Վաղը հետներդ բերեք թիթեղյա հին տուփեր:

Հետևյալ որը դպրոցական արհեստանոցում մեր բերած տուփերից պատրաստեցինք խսիրե պոչերով պտտաններ և զընգաններ: Այդ պատրաստած իրերը դասավորեցինք պարտեզի ծայրամասերում:


Զնգզնգացին զնգանները, պտավեցին պտտանները: Բարձրացավ խլացուցիչ աղմուկ և դղրդոց:

Վախկոտ նապաստակները փախան մեր պարտեզից:

ՄԵՐ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ ՅԵՎ ԹՈՉՈՒՆՆԵՐԸ

ՅԵՂՆԵՐ ՅԵՎ ԳՈՄԵՇՆԵՐ

Մեր յերկրամասում, բացի ձիերից, պահում են յեղներ և գոմեշներ: Նրանց ոգտագործում են ապրանքների փոխադրության և հողի մշակման համար:



Յեղները բանուկ կենդանիներ են: Նրանք հաճախ մոխրագույն են լինում: Նրանց գլխին կան գույգ յեղջյուրներ:

Գոմեշները շատ անճոռնի և տգեղ կենդանիներ են: Նրանց հաստ կաշին ծածկված է նոսր, կոշտ մազերով: Այդ պատճառով գոմեշները ցրտին չեն դիմանում: Գոմեշներին գլխավորապես պահում են տաք յերկրներում:

Տաք յեղանակին գոմեշները սիրում են մտնել ջրի կամ ուղղակի տիղմի մեջ: Այդպիսով նրանք իրենց կաշին պահպանում են շոգուց և միջատներից:

Յեղների և գոմեշների միսը գործ են ածում կերակրի համար: Մատակ գոմեշները լավ կաթ են տալիս:

Տաք յեղանակին գոմեշները սիրում են մտնել ջրի կամ ուղղակի տիղմի մեջ: Այդպիսով նրանք իրենց կաշին պահպանում են շոգուց և միջատներից:

Յեղների և գոմեշների միսը գործ են ածում կերակրի համար: Մատակ գոմեշները լավ կաթ են տալիս:

Ե Շ

Ալին պատրաստվեց գնալ հարևան աուլը: Հեծավ եղը, սկսեց քշել, իսկ նա տեղից չեր շարժվում:

Յերկար ժամանակ Ալին ծեծում եր եղին, նա կանգնել եր տեղում և չեր ուզում գնալ: Ի՞նչ անել:

Ալին շատ մտածեց, թե ի՞նչ պես ստիպի եղին գնալ. վերջապես



պես հնարը գտավ: Նա մտրակի ծայրին մի գաղար կապեց և մտրակը պահեց եղի դնչի առաջ: Եղը նկատեց իր առաջ գտնվող գաղարը և գնաց նրա հետևից:

Բայց ինչքան ել եղն առաջ եր գնում, գաղարին չեր կարողանում հասնել:

Այն ժամանակ նա ավելի արագ գնաց, բայց գաղարը դարձյալ նրանից առաջ եր: Այսպիսով եղը գնաց լեռնային նեղ կածանով:


Գաղարն ստացավ այն ժամանակ, յերբ հասավ աուլը, ուր գնում եր Ալին:

Ո Ի Ղ Տ

Վանյան բնակվում եր Շախտի քաղաքում: Ամառն իր հոր հետ գնաց ստանիցան՝ տատի մոտ: Կայարանից նրանք գնում եյին տափաստանով:

Ճանապարհին պատահեց մի ուղտ, վորը քաշում եր խոտով բեռնված սայլը: Մայլի կողքից գնում եր մի ծերունի:

Ուղտն որորվում եր գնալու ժամանակ և ծուլությամբ շարժում յերկար վոտքերը: Ուղտը մեջքին ուներ յերկու սապատ: Վանյան դրանից առաջ յերբեք ուղտ չեր տեսել և այդ պատճառով աչքը նրանից չեր հեռացնում:



— Ո՞ւր ես գնում, պապի,— հարցրեց հայրս ծերունուն:

— Կոլտնտեսության համար խոտ եմ տանում,— պատասխանեց ծերունին:

— Անասունդ լափն է,— հարցրեց հայրս ցույց տալով ուղտին:

— Շատ լափն է,— պատասխանեց ծերունին,— կաթ է տալիս, միս է տալիս: Շոգից չի վախենում: Կարող է հինգ որ

առանց ջրի դիմանալ: Առանց կերի յեւ կարող եւ չորս որ դիմանալ: Չե՞ վոր նրա սաւազատներում ճարպ կա:

— Ահա թե ի՞նչպիսի ոգտակար կենդանի յե ուղտը, — մտածեց Վանյան:

Վ Ո Չ Խ Ա Ր Ն Ե Ր

Մեր յերկրամասում պահում են շատ վոչխարներ: Համարյա ամբողջ տարին նրանք արածում են տափաստաններում և լեռնային մարգագետիններում:

Արոտատեղիներում վոչխարներին բաժանում են հոտերի — յուրաքանչյուրը հինգ հարյուր, հազար գլուխ:

Ամեն մի հոտում կան յերեք կամ չորս հովիվ և մի քանի հովվական շներ:

Շներն ոգնում են հովիվներին արածեցնելու վոչխարները: Նրանք հավաքում են վոչխարներին, քշում են հետ մնացածներին: Վոչխարներին պահպանում են գալլերից:

Տափաստաններում պահում են դմակավոր վոչխարներ:

Գարնանը լավ արոտատեղիներում դմակն արագ կերվով ավելանում է:

Չմեռը ձյան տակից վոչխարները մեծ դժվարությամբ են իրենց համար կեր գտնում: Այն ժամանակ դմակը փոքրանում է: Ճարպի պաշարը ծախսվում է կենդանուն սնելու համար:

Լեռներում պահում են կարաչայի վոչխարներ: Սև ծովի ափերում պահում են մերինոս վոչխարներ: Այդ վոչխարներից լավ տեսակի փափուկ բուրդ է ստացվում:

ԼԵՌՆԱՅԻՆ ԱՐՈՏԱՎԱՅՐՈՒՄ


Դպրոցում, դասամիջոցներին, մենք հաճախ խոսում եյինք այն մասին, թե ամառը կգնանք յայլա:

— Ինձ եւ կտանեն, — ասաց փոքրիկ Ոսմանը:

— Դու այնտեղ չես կարող հասնել, — ծիծաղեցին յերեխաները: Չե՞ վոր պետք է բարձրանալ լեռները:

— Կգնամ, այ, կտանեք: Յես կարողանում եմ լավ մազըլցել լեռներում, — հավատացնում եր Ոսմանը:

Յեկավ գնալու որը: Առավոտյան շատ վաղ հոտերը դանդաղորեն մեկնեցին դեպի լեռները: Նրանց հետևից գնում եյին ձիերն ու եղերը, բեռնավորված գանազան իրերով: Բարձր հաջոցով վազում եյին շները և ոգնում եյին քշելու այծերին, վոչխարներին ու կովերին:



Հետևյալ որը մենք հասանք յայլան:

Ի՞նչքան լավ եր այնտեղ: Բարձր հյուսթալի խոտը համուում եր մինչև գոտին: Չորս բուրդը փայլում եյին վառ ծաղիկները: Ոսմանը ման եր գալիս մարգագետիններում: Նա նույնիսկ յեղավ նաև անտառում: Այնտեղից բերեց մի ամբողջ փունջ ծաղիկներ և գլխարկը լիքը պտուղներ:

Մեր կոլանտեսուլթյան անասուններն այստեղ շատ ազատ են: Որ ու գիշեր նրանք արածում են:

Կովերը, վոչխարներն ու այծերը շատ կաթ են տալիս:

Յերեկը յայլայում յեռում է աշխատանքը: Կաթից պատրաստում են յուղ, պանիր և թան: Հետո այդ մթերքները տանում են կոլանտեսուլթյուն և կոոպերատիվ:

ՉԿԱՐՈՂԱՑԱՎ ՈԳՏՎԵԼ

Գայլը տեսնում է, վոր նախիրը գտնվում է տափաստանում, իսկ հովիվը չի յերևում: Նա վոստյուն գործեց դեպի նախիրը, ուզեց բռնել հորթին, բայց չհաջողվեց: Բոլոր կովերը հարձակ-



վեցին նրա վրա և սկսեցին յեղջուրներով խփել:

Գայլը հազիվ կարողացավ իրեն գցել յեղեգնուտը: Իսկ յեղեգնուտների մեջ փչում եր խոզի մսի համեղ հոտը: Վայրի խոզերը այնտեղ փորփրում են հողը և խոռթխոռթում: Քաղցած է գայլը: Հարձակվեց նա խոզուկի վրա: Բայց վարազը ժանիքները

դարձրեց նրա վրա. գայլը հուպ տվեց իր պոչը և փախավ:

Նա դարձյալ վազեց տափաստան: Իսկ այնտեղ արածում եր ձիերի յերամակը: Յերամակի ձիերը բոլորն ել կուշտ եյին: Գայլը մտավ յերամակի մեջ, իսկ ձիերը բոլորն ել շուռ յեկան և սկսեցին քացի տալ նրան: Գայլը հազիվ կարողացավ փախչել:

Գայլն այդպես ել վոչ մի տեղում չոգտվեց:

ՎԱՅՐԻ ԿԱՏՈՒՆ ՅԵՎ ԼՈՒՍԱՆՆԸ

Նապաստակն իր ձագերի հետ դուրս յեկավ թփերի հետեվից, նստեց ծառի տակ, անտառի մարգագետնում և ականջները սրեց:

Ձագերն սկսեցին վազվզել, թազչելուկ խաղալ:

Ձագերից մեկը հեռացել եր: Այդ ժամանակ նրա վրա ծառից հարձակվեց մի վայրի կատու:

Վայրի կատուն բռնեց նապաստակի ձագին և կրկին թռավ ծառի ճյուղի վրա:

Վայրի կատուն հենց նոր եր ուզում ագահաբար լափել ձագին, յերբ հանկարծ նրա մեջքի վրա նստեց մի ինչ վոր գազան:

Վախից կատուն արձակեց իր ձանկերը և բաց թողեց նապաստակի ձագին:

Նապաստակն ընկավ փափուկ խոտերի մեջ, իրեն թափ տվեց և վազեց մոր մոտ:

Իսկ ծառի վրտ սաստիկ կրոփի եր: Լուսանն իր ձանկում պատառոտեց վայրի կատվին, լափեց նրան, նստեց ճյուղի վրա և սկսեց թաթը լիզել:



Լուսանը շատ նման է վայրի կատվին՝ շեկ, ականջների վրա փնջիկներ, աչքերը՝ դեղին, պոչը՝ կարճ: Նստել է լուսանը, լիզում է թաթը և գունչը լվանում նրանով:

Նա շատ նման է կատվին, միայն թաթերը շատ մեծ են և ձանկերը՝ սոսկալի:

Յ Ե Ղ Ջ Ե Ր Ո Ի


Յեղջերուն ապրում է կովկասյան լեռների խիտ, զով անտառներում: Յեղջերուն սնվում է բույսերով: Նա շատ է սիրում կրծել մատղաշ ծառերի կեղևը: Յեղջերուները պատահում են փոքր հոտերով — յուրաքանչյուրը տասից մինչև տասներկու հատ:

Գայլերը հաճախ հարձակվում են յեղջերունների վրա: Ուշ աշնանը և ձմեռը գայլերը սաստիկ սովածանում են: Նրանք սկսում են հետապնդել յեղջերուններին:

Այն ժամանակ յեղջերուն սովորաբար վազում է դեպի գետը: Նա նետվում է խոր ջրի մեջ և սկսում է ագահաբար խմել ջուրը:

Իսկ նրա զգայուն ականջը լսում է վտանգավոր հետապնդումը:

Գայլերը բոլորովին մոտ են: Նրանք նստում են գետի ափին և հետևում՝ մինչև յեղջերուն դուրս գա ջրից: Իսկ շուրը պաղ



ե. Մարմինը թմրում է: Սառցի ծծակները կախվում են բրդից: Իսկ դուրս գալ չի կարող. նրան անդադար հետևում է սոված գայլերի վտնակը: Վերջ ի վերջո յեղջերուն զոհ է դնում:

ՓՈՔՐԻԿ, ԲԱՅՅ ԽՈՐԱՄԱՆԿ



Բարձր ժայռի վրա կանգնած էր լեռնայծր: Կանգնել և դիտում էր շուրջը: Իսկ քիչ ցած՝ այժն ուլիկներ ի հետ արածում էր:

Հանկարծ այժը վորսորդին նկատեց, կճղակով լսփեց ժայռին և նշան տվեց: Իսկ ինքն անդնդի վրայից թռավ և անհայտացավ:

Այժը լսեց, թողեց ուլիկներին և նույնպես արագ անհայտացավ:

Իսկ ուլիկը վոչ կանչեց, վոչ էլ փախավ: Թագնավեց քարի հե-

տևում և կպավ գետնին: Կուացավ, պառկեց և աչքից ծածկվեց: Նրա գույնն էլ հենց հողի գույնն է:

Վորսորդը նրան չնկատեց և անցավ: Քիչ այդպես պառկած մնալուց հետո, ուլիկը կանգնեց և փնտռում էր մորը:

Մայրը վերագարձավ ուլիկի մոտ, իսկ հայրը կանգնեց ժայռի վրա և շարունակեց հսկել:

ՂԵՌՆԱՅԻՆ ԱՆՏԱՌՈՒՄ


Իսկական գարունն է: Բնությունը զարգարվել է: Գարնանային արևից տաքացած հողը ծածկվել է թարմ խոտով:

Կանաչել են կաղնիների, հաճարենիների և շագանակի ծառերի դալար տերևները: Բլրակների և անտառային փոքրիկ մարգագետինների վրա բացվել են գույնզգույն ծաղիկներ: Տաք յերկրներից վերագարձան չփող թռչունները և ուրախ ծլվոցով լցրին լեռներն ու անտառները:

Կիրճից դուրս յեկավ կարմրավուն արջը և սկսեց որորվելով ման գալ անտառում: Մի տեղ խոտ է պոկում, մի ուրիշ տեղ՝ ծառի թարմ տերևներն է փորձում: Իսկ յերբեմն գտնում է նաև անցյալ տարվա շագանակ կամ կաղին: Չմեռվա ընթացքում բոլորովին նիհարել է արջը, քաղցած է և քայլում է բարկացած—ամենքի վրա ծուռ է նայում:

Եգ արջն իր արջուկների հետ նույնպես դուրս է յեկել լույս աշխարհ, պառկել է արևին և տաքանում է:

Ահա զգուշությամբ մոտենում է աղվեսը: Նա դեմ չէ, յեթե կարողանա բռնել մի նապաստակ կամ վոզնի: Իսկ վոզնին կծկվում է:



Աղվեսը գլորում է նրան գետի մոտ: Հենց վոր հասնում է ջրին, վողնին իսկույն բացվում է, իսկ աղվեսին ել միայն այդ է հարկավոր:

ԱՆՏԱՌԻ ՎՆԱՍՍՏՈՒՆԵՐԸ

Առավուր բացվեց: Անտառը կենդանացավ: Թփերում իրար անցան աշխուժ ճայերը: Յերկար կտուցներով թխկացրին փայտփորները:

Յերեխաները միասին խմբված մտան անտառը: Ուսուցիչը կանգնեց բարձր յեղևնու մոտ: Նա ուշադրությամբ նայում էր ծառի կեղևը, ալանջ էր դնում, և խփում մատով:

— Այ թեգ անախտան բզեզ: Տես, թե ուր է բարձրանում: Բոլոր յերեխաները հետ նայեցին:

— Ապա այստեղ յեկեք, — կանչեց ուսուցիչը: Յերեխաները շրջապատեցին ծառը:

— Ի՞նչ, բզեզ է դա, — հարցրին նրանք:

— Դա կեղևակեր է: Ահա տեսեք այս կեղևը: Նա ամբողջովին նախշած է: Դա կեղևակերի անցքերն են: Կեղևակերները կարող են այդպես շատ կեղևներ վոջնչացնել: Իսկ յեղևնու բունը շատ արժեքավոր շինանյութ է:

— Իսկ ինչպե՞ս վոջնչացնել այս կեղևակերին, — հարցրեց Սեդան:

— Տեսնում եք, ահա այնտեղ թափված են յեղևնու կոճղերը: Դրանք կեղևակերին հրապուրելու համար են: Յերբ այնտեղ շատ կեղևակերներ են հավաքվում, կոճղերն այրում են:

Յերեխաները յերկար թափառում էին անտառում: Կիման գտավ մի գեղեցիկ գուլնագուլն թիթեռնիկ, վորը կոչվում է մենակյաց: Նրա թրթուրները վոջնչացնում են փշատերև անտառները:

Իսկ Պետրոսը գտավ մի կանաչ բզեզ: Նրանք շատ ոգտակար են: Նրանք վոջնչացնում են անտառի բազմաթիվ փասսատուներին:

Յերեխաները բավականութուն ստացած վերադարձան ճամբարը: Նրանք կորեկցիայի համար հավաքեցին բազմաթիվ զանազան միջատներ:

ՊՈՆՏԱԿԱՆ ՄԿՆԵՐ

Նոր վանդակում նստած են յերկու պոնտական մկներ՝ մոխրագուլն և խայտաբղետ: Նրանց յերեկ բերին կենդանի անկյան համար: Յերեխաները շրջապատել են վանդակը և դիտում են կենդանիներին:

Նրանք փոքր են, բայց մեծ փասներ են հասցնում: Կատակ եք կարծում: Ամեն մի պոնտական մուկ տարեկան ուտում է չորս կիլոգրամ հացահատիկ:

Եգ մուկը գարնանը ծնում է տասը ծագ: Մի ամսից հետո նրանք իրենց համար անցքեր են փորում և ազահաբար ուտում են կանաչեղեն, հասկեր, սերմեր և արմատներ: Չմեռվա համար իրենց բներում հացահատիկների մեծ պաշար են պատրաստում:

Պոնտական մկները կորսնտեսություններին մեծ փասներ են հասցնում: Պետք է վոջնչացնել այդ փասատու պոնտական մկներին, իսկ մորթիները հավաքել:



ՏԱՓԱՍՏԱՆԱՅԻՆ ՄՈՒԿ

Տափաստանային մուկը շուտ է պատրաստվում ճամբելու: Նա փորոշ տեղում հավաքում է հասկեր, հացահատիկներ և խոտերի սերմեր:

Այդ բոլորը նա դարսում է կուլտերով: Կուլտը վերևից ծածկում է հողով: Կուլտի տակին անցք է փորում և մեջը խոտ փռում:

Մուկն այստեղ ապրում է մինչև գարուն:

Տափաստանային մկները մեծ քանակութեամբ հացահատիկ են ուտում: Նրանք կոլտնտեսություններին մեծ վնասներ են հասցնում: Նրանց բռնում են զանազան թակարդներով և թունավորում են թուխով:

ՈՁԸ ՅԵՎ ՄՈՒԿԸ

Մկնիկը դուրս է յեկել հացահատիկ ուտելու, իսկ խոտերի միջից սողում է ոձը:

Փշացրեց ոձը և թունավոր ատամներով կծեց մկնիկին: Մկնիկը թուխից թուլացավ և չկարողացավ վազել:

Ոձը նրան կուլ տվեց և կրկին սողաց վորս բռնելու:

ԿՈՐՅՐԱՄ ՊՈՁԸ

Հին բլրի վրա ապրում էյին յերկու մողես: Մողեսները շատ ճանճեր և բլեզներ կուլ տվին: Նրանք արևի տակ շատ ուրախ են և զվարթ են: Զվարճանում են, իրար հետևից վազում. տարվել են խաղով:

Հանկարծ, վորտեղից վոր եր մի կաշաղակ: Նա բռնեց մողեսների մեկի պոչից: Դե, այժմ կարելի յե և անուշ անել:

Բայց չհաջողվեց: Կաշաղակի կտցում մնաց միայն կանաչ պոչը, իսկ մողեսն այդպես էլ առանց պոչի փախավ:

ՎԱՅՐԻ ԹՈՂՈՒՆՆԵՐ

Մեր տափաստաններում ապրում են զանազան թռչուններ: Արոսները մեծ յերամներով աշնանը ման են գալիս տափաստաններում: Նրանք տափաստանային ամենամեծ թռչուններն են: Նրանք թռչելիս ծանր են բարձրանում, բայց արագ են վազում:

Արոսներն ոգտակար թռչուններ են: Նրանք վոչնչացնում են մեծ քանակութեամբ միջատներ — դաշտերի վնասատուներ:

Տափաստաններում ապրում են և մեր հավերի վայրի ցեղակիցները — կաքավները և լորերը: Լորերն ապրում են բաց

տեղերում: Կաքավները սիրում են իրենց բույնը շինել թփուտներով ծածկված տափաստանային անտառներում և ձորերում:


Գիշերները թռչում է տափաստանային բուն: Նա ուտում է մեծ քանակութեամբ պոնտական և հասարակ մկներ:

ՎՈՁ ՄԻ ԿԵՐՊ ՉԵՍ ՀԱՍՆԻ

Կրիան դանդաղ շարժվում է ճանապարհով: Իսկ ազոավը մեկ այս ծառից, մեկ այն ծառից է նայում և կամ կրիայի գլխավերևից կանչում: Նա շատ հետաքրքրվում է կրիայով և հոտն էլ անուշ է փչում:

Ազոավը վճռեց, համարձակ կանչեց և թուավ ու նստեց ճանապարհին՝ հենց կրիայի դիմաց: Նստեց, թևերը թափահարեց և ծուռ-ծուռ ցատկելով մոտեցավ կրիային:

Յեվ ամբողջ ուժով կրիային կացահարեց: Բայց իզուր: Միայն կտուցը ցավացրեց: Կրիան թաթերը և գլուխը պահեց իր ամուր վահանի տակ: Յեվ այսպիսով ազոավը չկարողացավ կրիայի միսն ուտել:



ԼԵՌՆԱՅԻՆ ԱՐԾԻՎ

Արու և եղ արծիվներն ապրում էյին բարձր ժայռի վրա: Ծյուղերից բույն հյուսեցին և այնտեղ ձագեր հանեցին:

Նրանք յերկու ձագ ունեյին: Յերկուսն էլ անկուշտ էյին. ինչ էլ չբերես, քիչ է նրանց համար: Կանչում են, կանչում, ուտելիք են ուզում:

Իսկ ծնողները ամբողջ որը նրանց համար ուտելիք են բերում: Շատ գազաններ վոչնչացրին, շատ թռչուններ սպանեցին:


դատարկվեց նրանց շրջակայքը: Յեվ այլևս վոչ մի տեղից չե՛ր կարելի վորս ճարել:

Այն ժամանակ արծիվներն սկսեցին անհանգստացնել հոտերը՝ գողանալ գառներին, ուլերին և ճուտերին: Հովիվներն ստիպված հոտերը նոր տեղեր բռնեցին:

Կրկին արծիվներին վորսալու բան չմնաց:

Այն ժամանակ արծիվը թռավ հեռու լճի մոտ, ջրային թռչուններ վորսալու:

Արծիվը կշտացավ, բազեր վորսաց և իր բույնը բերեց:



ԼԵՌՆԱՅԻՆ ՀՆԴԿԱՀԱՎԸ

Բարձր լեռան ժայռերի միջև արածում եր խոշոր թռչունների յերամբ: Նեղ արահետով զգուշութեամբ բարձրանում եյին յերկու վորսորդ:

Հանկարծ լավեց անհանգիստ շվոց: Վորսորդը կրակեց և առաջ վազեց: Քարի մոտ թպրտում եր վիրավորված թռչունը:

— Դա լեռնային հնդկահավն ե, — ասաց վորսորդն իր ընկերոջը: Այգտեղ արածում եր հնդկահավերի մի ամբողջ յերամբ: Այդ նրանք եյին շվացնողը, յերբ մեզ նկատեցին:



— Իսկ ի՛նչպիսի գույն ունի նա: Բոլորովին ժայռի գույն, հեռվից չես ել նկատի, — ասաց

ընկերը: Վորսորդները Որջոնիկիձե քաղաքն են բերում այդպիսի թռչուններ: Նրանց միսը շատ համեղ ե:

ՃԱՐՊԻԿ ԶԿՆՈՐՄՆԵՐ

Ձուկը խաղում ե գետախորշում: Լավ և հանգիստ ե զգում իրեն: Այգտեղ մեծ ձկներ չկան: Ազատ լողալն անվտանգ ե:


Նա զվարճանում ե հատակ ջրի տակ, խոտեր ե փետում:

Իսկ հավալուսները թռչում եյին բարձրում և սրատես աչքերով հետևում ձկներին:

Իջան հավալուսները, յերկու խմբի բաժանվեցին: Նրանք նրստեցին գետի ծանծաղուտի զանազան կողմերում և սկսեցին ձկներին քշել իրար մոտ:

Նեղճ ձուկը չգիտե, թե ուր գնա, ինչպես պաշտպանվի: Ուր գնում ե, թռչնի կտցին ե հանդիպում: Իսկ գնալ դեպի գետի խոր տեղերը, նույնպես վտանգավոր ե: Այնտեղ ել նրստել են հավալուսները, հետևում են և հարմար առիթի սպասում:

Այսպես հավալուսները վորսացին ծանծաղուտի բոլոր ձկներին և հետո թռան:



ԾՈՎ ՅԵՎ ԳԵՏԵՐ

Վ Ա Ր Ա Ր Ո Ի Մ

Արևը խիստ տաքացնում եր մարտի վերջին: Ձյունն արդեն հալվեց: Դռնի սառույցն ուռեց, կտորատվեց և սկսեց հալչել: Սառցի վրայով քայլելը վտանգավոր եր: Ամեն ըուպե սպասվում եր սառցաշարժը:

Գիշերը ճայթոց լավեց: Ափի բնակիչները խրճիթներից դուրս

վագեցին: Գետը կատաղի աղմկում էր: Սառույցը ճայթում էր
և մեծ-մեծ կտորներով առաջ շարժվում, բռնելով ամբողջ
գետը: Սառցի խոշոր կտորները կուտակվում էին իրար վրա,
սուզվում էին ջրի տակը, դուրս պրծնում, քսվում ափերին:

Անցավ յերեք օր: Դոնի վրա սառույց չմնաց: Միայն պղտոր,
պաղ ջրերն էին հեղեղում ափերը:

Դա Դոնի առաջին վարարումն էր:

Ապրիլին Դոնի ջուրը կրկին սկսում է ավելանալ:

— Տաք ջուրն է անցնում, — ասում են տեղական բնակիչ-
ները: Հյուսիսում՝ սառույցը հալվել է Դոնի ակունքներում: Այն-
տեղ գարունն սկսվում է ավելի ուշ, քան մեզ մոտ:

Դոնի ջուրն ավելանում է ու ավելանում: Ահա նա հեղե-
ղեց ցած ափերը: Հեղեղվել են նաև մերձավայնյա ստանիցաները:

Բնակիչները քայլում են բարձր կամուրջների վրայով: Հենց
վոր սկսում է փչել հարավ-արևելյան քամին, Դոնի ջուրն ավելի
յե բարձրանում: Ջուրը հեղեղում է կամուրջները և բնակիչներն
ստիպված են լինում տեղափոխվել նավակներով:

Մի քանի օրից հետո ջուրն իջնում է: Վարարումը վերջա-
նում է: Ստանիցան սկսում է վերանորոգել և սպիտակացնել
իր խրճիթները:

Ահա չորացան հեղեղված տեղերը: Այնտեղ նստել էր շատ
տիղմ: Այդ հողերը կվարեն բանջարանոցների համար և լավ
բերք կտանան:

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՎՈՐՍ

Սառույցն անցավ: Գետերը բացվեցին: Ձկներն սկսեցին անց-
նել մեծ խմբերով:

Ձկնորսային կոլտնտեսություններն արդեն պատրաստ են:
Նրանք պատրաստել են ուռևկանները, ցանցերը և նավակները:

Ձկնորսները դուրս յեկան Դոն գետի վրա: Արագ և ճար-
պիկ կերպով նրանք ցանցերը ձգում են ջուրը: Ահա հանեցին
ցանցերը: Նավակները լցվեցին ձկներով:



Ինչքան շատ են բրամ և շեղաձուկ ձկները: Ահա և գետա-
յին գեր վոսկեգույն ծածանը, վոր փայլում է արևի տակ:

Դոն գետում բռնվում են նաև զուլթղի, ճանառ և թառափ
ձկները:

ԼԵՌՆԱՅԻՆ ԳԵՏԵՐ


Արևի տակ փայլում են լեռների ձյունապատ գագաթները:
Ձյան տակից արագ հոսում են լեռնային գետակները: Այդ գե-
տակները միանում են իրար և կազմում լեռնային գետեր:

Լեռնային գետերը յերեք չեն
սառչում: Նրանց ջրերը միշտ ել
սառն են:

Ամառը, յերբ արևը տաքաց-
նում է, լեռնային ձյունը սկսում
է արագ կերպով հալչել: Այն ժա-
մանակ լեռնային գետերի ջուրն
սկսում է վարարել: Նրա կատաղի հոսանքը քանդում է ափերը:
Այդ ժամանակ լեռներում հաճախ լինում են փրվածքներ:

Լեռնային գետակներում գտնվում է հազվագյուտ կարմրա-
խայտ ձուկը: Նա սիրում է մաքուր ջուր:

Կարմրախայտը — խայտարդետ ձուկ է: Ջրի մեջ դժվար է
նրան քարերից տարբերել:



Մեր յերկրամասի լեռնային գետերի առաջ բռնում են և այնտեղ բազմացնում կարմրախայտ և գետային ծածան ձկները: Այժմ լեռնականները շատ ձուկ կունենան:

ԹԵՐԵՔ

Առավոտյան մեր վաշտը եքսկուրսիա գնաց դեպի հեռուները: Ճանապարհը գնում եր Թերեք գետի բարձր ափով: Գետն անընդհատ աղմկում եր ներքևում, նեղ հովտում: Զուրը դըրդոցով գլորում եր շատ մեծ քարեր:

Մենք նստեցինք հանգստանալու: Մեղնից վոչ հեռու նորոգում եյին ճանապարհները: Ընդմիջումի ժամանակ մեզ մոտ յեկավ մի յերիտասարդ բանվոր:

— Բարև ձեզ, տղաներ, — ասաց նա, — հիանում եք մեր Թերեքով:

— Այո, հիանում ենք, — պատասխանեց Գրիշան: — Ինչպիսի գեղեցիկ և մուլգին գետ ե:

— Իսկ այդ ի՞նչ ե, վոր յերևում ե հեռվում, — հարցրեց Կոլյան:

— Դրանք ջրանցքներ են, — պատասխանեց բանվորը: Նրանք այստեղ շատ հարկավոր են, հատկապես ամառը:

— Իսկ ինչո՞ւ ամառը, — զարմացած հարցրեց Վանյան:

— Ամառը լեռների կատարներում շատ ձյուն ե հալչում: Հաճախ ուժեղ անձրևներ են գալիս: Թերեքի ջուրն սկսում և արագորեն բարձրանալ: Այն ժամանակ կատաղում ե Թերեքը — կամուրջներն ե պոկում, ճանապարհներն ե հեղեղում: Նա լայնորեն տարածվում ե հարթության վրա: Թե՛ դաշտերը, թե՛ բանջարանոցները և թե՛ խաղողի այգիները — բոլորը լցնում ե ցելսով և քարերով:

— Մի՞թե ուրեմն այժմ հեղեղում չի լինում, — հարցրեց Վանյան:

— Այժմ մեր կատաղի Թերեքը զսպել են: Նրա ջրերը քարե ջրանցքներով ուղարկում են չոր հովիտները: Առաջ այնտեղ բու-

լորովին ջուր չկար: Իսկ այժմ այդ հովիտներում կոլտնտեսությունները ցանում են դաշտերը, այգիներ ու բանջարանոցներ են մշակում և առատ բերք հավաքում:

ՃԱՄԲԱՐՆԵՐՈՒՄ

Արդեն պարապմունքները վերջացել եյին, բայց մենք ամեն ոք հավաքվում եյինք դպրոցում: Մենք պատրաստվում եյինք մեկնել պիոներական ճամբարը:

Հունիսի կեսին, վերջապես, ճանապարհ ընկանք: Ճանապարհին շատ ուրախ եր և աղմկոտ:

Առավոտը հասանք Սոչի: Մեր ճամբարը գտնվում եր մեծ պուրակում: Սոսիների և մշտադալար նոճիների կանաչի մեջ սպիտակին եյին տալիս վրանները: Իսկույն վազեցինք դեպի ծովը:

Արագ կերպով հանեցինք մեր շորերը և նետվեցինք ջուրը: Ինչքան հեռու եր տարածվում ծովը: Ափերն ել չեն յերբվում. այն չե, ինչ վոր գետի վրա: Իսկ ծովի ջուրը — կապույտ-կապույտ:

Միայն խմելու համար նա անպետք ե — դառնաղի յե:

Լողանալուց հետո պառկեցինք քարերի վրա իրար կողքի: Արևը լավ այրում եր մեզ:

Հետո յերկար ժամանակ մենք հավաքում եյինք կապույտ ձկներ, ծովային խեցգետիններ և գույնզգույն քարեր:

ԾՈՎԱՓԻՆ

Արևի փայլ, ավազ և ծով...

Յեվ մակույկներ առազաստավոր,

Իսկ ծովից լավում ե խրոխտ,

Տղաների ճիչը լիաթոք:


Ահա ալիքն ե գալիս վիթխարի,

Դե տղերք, զգու՛յշ նայեցեք:

Իսկույն կծածկի, գլխիվայր կանի —

Ավաղին դուք շուտ պառկեցեք:

ՄԵՐ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԸ




Ահա նոր մեծ Սելմաշ գործարանը: Նա գլուխավորում է Ռոստովում: Սելմաշի բանվորները շինում են՝ գուլթաններ, ցանիչներ, կոմբայններ և ուրիշ մեքենաներ:

Սելմաշից արագ կերպով մեկնում են յերկար գնացքներ: Սրանք Սելմաշի պատրաստած մեքենաները տանում են կոլտնտեսությունները:

ՄԵՔԵՆԱՆԵՐԸ ԿՈՂՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ


Վազում են շոգեկառքերը
Շատ վազոններ բաշում.
Գործարանից կոլտնտեսություն,
Մեքենաներ տանում:
Ճչում են շոգեկառքերը,
Անիմներն արագ շարժում.
Մեքենան կոլտնտեսականների
Աշխատանքն է հեշտացնում:

ՄԵՔԵՆԱՆԵՐԸ ԿՈՂՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ



ԿՈՄԲԱՅՆ

Շտապիր, այս կողմը նայիր,
Ահա կոմբայնը դաշտերի մեջ.
Հնձում, ծեծում է նա հատիկը
Յեվ մաքրում է միանգամից:



ՇԱՐՔԱՅԱՆ


Ուղիղ է շարժվում շարքացանը
Միշտ առաջ, միշտ առաջ, առաջ,
Յեվ արագ ցանում է սերմը
Յեվ հողով ծածկում արագ:

ՎՈՐՏԵՂ ԵՆ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՒՄ ԱԾՈՒԽԸ

Յեթե առավոտը գնացրով դուրս գանք Ռոստովից, ապա կեսօրին կհասնենք Շախտի քաղաքը:

Այդ քաղաքի շուրջը, գետնի խորքերում, գրտնվում են մեր յերկրամասի ածխի հանքերը:

Այն տեղերում, վորտեղ արդյունահանում են ածուխը, շինված են խոր ածխահորեր: Իջնում ես այդ հորը, իսկ այնտեղից ամեն կողմ տա-



րածվում են յերկար միջանցքներ: Ահա այդտեղ, գետնի տակին արդյունահանում են ածուխը:

ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻՆ ԱԾՈՒԽ

Սերմաշին ամեն որ մոտենում են յերկար գրտնացքներ: Նրանք շտապում են վառելու համար քարածուխ հասցնել:


Մեր յերկրամասում գետնի տակ շատ ածուխ կա: Նրան արդյունահանում են բանվոր շախտյորները:

Ածուխը բեռնում են վագոնները: Վագոնները կցվում են իրար և կազմում յերկար գնացքներ:

Անվերջ ու անվերջ գնացքները մոտենում են Սերմաշին և ուրիշ գործարաններին:

Մեր յերկրում շատ ֆարրիկաներ և գործարաններ կան:

Նրանց շատ ածուխ է պետք:



ՄԵՐ ՆԱՎԹԸ

Նավթը գտնվում է գետնի խորքերում, Գրոզնի և Մայկոպ քաղաքների շուրջը:

Նավթը մեղ շատ պետք է: Նա գործարան-

ների և ֆաբրիկաների վառելիքն ե: Նավթով են վառում շոգեկառքերը և շոգենավերը:

Նավթից պատրաստում են կերոսին և բենզին: Մեզ շատ նավթ է պետք: Մեզ շատ կերոսին և բենզին է պետք:

Նավթն արդյունահանում են բանվորները: Նրանք գետնում խորը հորեր են փորում և այնտեղից հանում նավթը:

Գնացքներն իրար հետևից մեկնում են Գրոզնուց: Նրանք նավթ են բերում Սելմաշին և ուրիշ գործարաններին: Նրանք կերոսին են բերում բաղաքներին, ստանիցաներին: Նրանք բենզին են բերում ավտոմոբիլների և սավառնակների համար:

Ո՞վ է Մեջ կոշկեղեն ՏԱԼԻՍ

Ռոստովում գտնվում է ընկեր Միկոյանի անվան ֆաբրիկան: Այդ ֆաբրիկայում պատրաստում են մեծ բանակով զանազան կոշկեղեն:

Չեք ուզում արդյոք տեսնել, թե ինչպես է աշխատում ֆաբրիկան: Գնանք այնտեղ:

Ահա մեծ դահլիճը: Տեսնում եք, վորքան շատ են բանվորները: Նրանք աշխատում են մեքենաներով: Նայեցեք ձեր շուրջը — ամեն տեղ՝ մեքենաներ, մեքենաներ և մեքենաներ:

Ահա այստեղ կա մի մեքենա: Նայեցե՛ք, թե ինչ է անում նա: Մեկ անգամից շատ արագ կերպով կտրում է հարյուրավոր ներբաններ:

Յերկրորդ մեքենան կարում է ներբանը և գամերով ամրացնում:

Իսկ յերրորդ մեքենան՝ կրունկներ է շինում, այն ել ինչպիսի արագությամբ:

Յեթե ձեռքով աշխատելու լինենք, որական կպատրաստենք միայն մեկ զույգ կոշիկ: Իսկ ֆաբրիկան մի որում կպատրաստի այնքան զույգ կոշիկ, վոր կբավականացնի հինգ դպրոցի աշակերտներին, ուսուցիչներին և պահապաններին միասին:

Ահա ինչպիսի ֆաբրիկաներ են կառուցել բանվորները խորհրդային կարգերում:

ԱՐԵՎԱԾԱՂԿԻ ՅՈՒՂ

Կրասնոդար բաղաքի մոտ գտնվում է յուղահան մեծ գործարանը:

Այդ գործարանում արևածաղկի հատիկներից յուղ են հանում:

Գործարանում աշխատում են շատ բանվորներ: Նրանցից յուրաքանչյուրը գիտե, թե ինչ պետք է անի ինքը:


Ամենից լավ և արագ աշխատում են բանվոր հարվածայինները:

Գործարանը ձեթն ուղարկում է բաղաքները և ստանիցաները:

Մենք շատ յուղահան գործարաններ ունենք: Իսկ մեր կոլտնտեսություններն արևածաղիկ են ցանում նրանց համար:

ԳՈՐԾԱՐԱՆ ԲԵՍԼԱՆՈՒՄ

Որչոնիկիձե քաղաքից վոչ հեռու գտնվում է Բեսլան կայարանը: Այդ կայարանի կողքին՝ մոտ ժամանակում՝ կառուցեցին մի նոր անագին գործարան:



Լեռնայիններն իրենց կոլտնտեսություններից ու խորհատնտեսություններից շատ յեզիպտացորեն են բերում այդ գործարանը:

Գործարանում մեքենաների ոգնությամբ այդ հացահատիկից բանվորները պատրաստում են սպա, մեղրաջուր, յուղ և այլ մթերքներ:

Գործարանում աշխատում են թե՛ լեռնայիններ և թե՛ ռուսներ:

Նրանք համերաշխորեն կատարում են յերկրորդ հնգամյակը:

ԻՆՉՊԵՍ ԵՅԻՆ ԱՊՐՈՒՄ ԲԱՆՎՈՐՆԵՐԸ ԹԱԳԱՎՈՐԻ ԺԱՄԱՆԱԿ

ԻՆՉՊԵՍ ԵՅԻՆ ԱՊՐՈՒՄ ՇԱՆՏՅՈՐՆԵՐԸ

Թագավորի ժամանակ շախտյորները աշխատանքը շատ ծանր էր: Այն ժամանակ շատ շախտյորներ էլին մահանում. կամ անխահորն էր փլում և նրանց կենդանի թաղում, կամ հանկարծ ջուր էր լցվում և բոլորին խեղդում:

Շախտյորները բնակվում էին հին, վողորմելի խրճիթներում և խոնավ գետնատներում: Նրանք շատ էլին աշխատում, բայց աշխատավարձը քիչ էր: Նրանք մատնված էին օաղցի և ցրտի: Չունեցին վոչ դպրոցներ և վոչ էլ հիվանդանոցներ:

ԱՅՍՊԵՍ Ե ՅԵՂԵԼ ԱՌԱԶ

Դուրսը ցերեկ լուսավոր,
Իսկ նկուղում սև խավար.
Հատակը փոսիկներով,
Ցած առաստաղ, խոնավ պատեր:
Ճեղքերից փչում է քամին, —
Ցուրտ և խոնավ է այնտեղ
Ահա բանվորի բնակարանը,
Ահա նրա ապաստարանը:

ԾԵՐ ԲԱՆՎՈՐԻ ՊԱՏՄԱԾԸ

Սա պատահել է շատ տարիներ առաջ: Այն ժամանակ յեսինսի մեջն էլի, իսկ քույրս՝ Մանիան դեռ հինգ տարեկան էր: Մեր ընտանիքն ապրում էր Ռոստովում: Հայրս աշխատում էր ծխախոտի գործարանում, իսկ մայրս նայում էր տան տնտեսությանը:

Մենք չբավորի պես էլինք ապրում. հաճախ էլ սոված էլինք մնում: Շատ վատ էլինք հագնվում: Հորս ամսական աշխատավարձը 18 ռուբլի էր, վորը մեր ապրուստին չէր բավականացնում:

Այն ժամանակ լավ էյին ապրում միայն հարուստները, վորոնց պատկանում էյին ֆաբրիկաներն ու գործարանները: Այնտեղ աշխատում էյին բանվորները, իսկ յեկամուտն ստանում էյին հարուստները և ապրում առանց կարիքի:

ԲԱՆՎՈՐՈՒՀՈՒ ՊԱՏՄԱԾԸ

Յես աշխատում էյի Շալիկովի ֆաբրիկում: Նա աշխատանքի չեր վերցնում այն կանանց, վորոնք յերեխաներ ունեյին:

— Այդպիսի բանվորուհին, — ասում եր գործարանատերը, — վոչ թե գործի մասին ե մտածում, այլ հոգ ե տանում յերեխայի մասին: Ինձ այդպիսիները պետք չեն:

Յես ունեյի մի տղա Պետրոս անունով: Նա չորս տարեկան եր: Յես ստիպված էյի թաղցնել Պետրոսին, վորպեսզի տերս նրա մասին չիմանար: Գնում էյի աշխատանքի և Պետրոսի վրա փակում էյի տան դուռը: Նրա մոտ թողնում էյի իր ամբողջ օրվա ուտելիքը:

Մեկ անգամ նստած աշխատում եմ, հանկարծ լսում եմ, հարցնում են, — Ո՞ւմ տղան ե սա:

Տեսնում եմ կանգնած ե Շալիկովը և բռնել ե Պետրոսի ձեռքից: Պետրոսը լալիս ե, իսկ յես լուծում եմ: Մեղքս ե գալիս, բայց լուծում եմ:

Հանկարծ Պետրոսը տեսնելով ինձ, դադարեց լաց լինել և մատով ցույց տվեց՝

— Ահա իմ մայրիկը:

— Դե, մայրիկ, — ասաց Շալիկովը, — առ վորդուդ և դուրս այստեղից:

Բանից յերևում ե, վոր անից դուրս գնալիս մոռացել եմ փակել լուսամուտը: Պետրոսը դուրս ե յեկել լուսամուտից, գնացել ե գործարան և պատահել գործարանատիրոջ: Իսկ նա բռնելով նրա ձեռքից, ման ածում գործարանում, վոր գտնե և ցույց տա իր մորը:


Դրանից հետո յերկու ամիս յես անգործ էյի և քաղցած: Ահա թե ինչպես էյինք ապրում առաջ:

ԻՆՉՊԵՍ ԵՆ ԱՊՐՈՒՄ ԲԱՆՎՈՐՆԵՐՆ ԱՅԺՄ

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ, ԱՎԱՆՈՒՄ

Այժմ բանվորները բոլորովին այնպես չեն ապրում, ինչպես թագավորի ժամանակ:

Հին բանվորները տեսնում են, վոր ամեն ինչ իրենց շուքը



փոխվել ե: Խրճիթների և գետնափոր տների անունն ել չկա: Նրանց փոխարեն կանգնած են քարե բարձր, գեղեցիկ տներ: Բանվորների բնակարանների լուսամուտները լայն են և լուսավոր: Ահա մեծ, գեղեցիկ դպրոցը: Այնտեղ սովորում են բանվորների յերեխաները:

Ահա մանկապարտեզը, կինոն և ճաշարանը:

Ավանում մաքուր ե: Կան շատ ծառեր: Գիշերները լուսավորում են ելեկարական լապտերները:

ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՏՈՒՆԸ

Սենյակում չոր և տաք,
Փոշի յերբեք չկա,
Լցվում ե պատուհանից
Վառ արևի լույսն առատ:

Մայրիկն ուրախ ե հիմա,
Ծխոտ խոհանոց չկա,
Ճաշ ենք բերում բոլորիս
Փաբրիկ-խոհանոցից:

Իսկ փոքրիկ քրոջ
Յեվ մանուկների համար,
Կա խաղի հրապարակ,
Մանկամսուր, մանկապարտեզ:

ՀԱՆԳՍՏԱՅԱՎ

Առաքելը վաղուց արդեն աշխատում է Գրողնու գործարաններից մեկում:

Բանվորները նկատեցին, վոր նա սկսել է հազար:

— Դե, Առաքել, բեզ պետք է բժշկվել, գնա կուրորտ:

— Ի՞նչ կուրորտ, — ասում է Առաքելը, — արդեն ուշ է, առողջությունս կորցրել եմ, այլևս յես չեմ բժշկվի:

Ամառը յեկավ: Առաքելին և ուրիշ հարվածային բանվորներին ուղարկեցին կուրորտ: Յերկու ամսից հետո Առաքելը վերադարձավ գործարան: Բժշկվել էր, արևից սեւացել և հազը կտրվել:

Նոր ուժերով նա սկսեց կրկին աշխատել:


ՅԱԲՐԻԿ-ԽՈՂԱՆՈՅ

Ռուստովում կառուցվեց մեծ ֆաբրիկ-խոհանոց:

Սուրենի ծնողները փոխադրվեցին գործարանի մոտ գտնվող մեծ տունը:

— Այժմ կճաշենք ֆաբրիկ-խոհանոցում, — ասաց Սուրենի մայրը: Վաղը, հենց վոր կլսես շշակի ձայնը, կգաս այնտեղ: Ժամի 12-ին Սուրենը գնաց ֆաբրիկ-խոհանոց:

Անցավ խոհանոցի շուրջը: Դուռը բաց էր: Անցավ շեմքից, իսկ նրա դիմաց արագ գնում էր կարտոֆիլով բեռնած սայլակը:



Մոտեցավ նա մեքենային, թափեց կարտոֆիլը և առաջ գնաց: Մեքենան սաստիկ աղմկեց: Նրա վրա յեղած կարտոֆիլը պտտվեց, թռչկոտեց: Մեքենայից մեծ ամանի մեջ են լցվում կարտոֆիլները:

Սուրենը գնաց առաջ: Հատակին դրված են մեծ կաթսաներ, իսկ նրանց մեջտեղում գտնվում է հսկայական պլիտան:

Կարտոֆիլով բեռնված սայլը մոտեցավ պլիտային, նրանից հետո մոտեցավ յերկրորդը՝ գազարով, յերրորդը՝ մսով: Բոլորն էլ դադարկեցին սկավառակների մեջ: Սկավառակները թշթշացին. գոլորշի բարձրացավ, բայց ծուխ չկա:

— Ա՛յ տղա, ի՞նչ է, ճաշարանն ես փնտռում, — հարցրեց Սուրենին մի ինչ վոր մարդ, — յեկ հետո:

Սուրենը գնաց մի մեծ լուսավոր սենյակ: Ամեն տեղ մաքուր, սպետակ սեղաններ, իսկ նրանց շուրջը նստած են բանվորները:

Ահա և նրա հայրն ու մայրը: Սուրենը նստեց նրանց հետ սեղանի շուրջը և սկսեցին ճաշել:

ԲԱՆՎՈՐՈՒՆԻ ԿԱՐՏԱՇՈՎԱՆ

Մրանից շատ տարիներ առաջ, դեռ թագավորի ժամանակ կապիտալիստ Ասմոլովը շինեց մի մեծ գործարան: Այդ գործարանում աշխատում էյին շատ բանվորներ և բանվորուհիներ:

Ինքը՝ Ասմոլովը բնակվում էր ընդարձակ, լուսավոր սենյակներով լավ տան մեջ: Նա ուներ շատ ծառաներ:

Իսկ բանվորները բնակվում էյին խոնավ, մութ ներքնատներում: Աշխատանքը գործարանում շատ վնասակար էր: Շենքը կեղտոտ էր և մութ: Այդ պատճառով բանվորների մեծ մասը հիվանդանում էր և մեռնում:

Այժմ ծխախոտի գործարանը չի ճանաչվում: Նա լուսավոր է դարձել: Այնտեղ դրված են նոր մեքենաներ: Վնասակար փո-



չին այլևս չի տարածվում ողում: Շինված են ողանցքներ: Բանվորները համար կառուցված են նոր տներ:

Մինչև հիմա յեւ գործարանում աշխատում են բանվորներ և բանվորուհիներ, վորոնք դեռ առաջ եւ աշխատել են Ասմուլի մոտ: Նրանք քիչ են և ծերացած:

Ահա հին բանվորուհի Կարտաշովան: Նա յերկար տարիներ պայքարել է ցարական իշխանութեան դեմ ուրիշ բանվորները հետ միասին: Ապա նա կռվել է սպիտակների դեմ: Նա յեղել է կարմիր պարտիզանների շարքերում:

Ներկայումս Կարտաշովան գործարանի լավագույն հարվածայնուհին է: Յերիտասարդ բանվորները նրանից որինակ են վերցնում: Նա նրանց ցույց է տալիս աշխատելու ձևը, թե ինչպես խնամել, պահպանել մեքենաները:


Այդ բոլորի համար խորհրդային իշխանութունը պարգևատրել է Կարտաշովային:

Նրան տվել են աշխատանքի հերոս պատվավոր կոչումը: Աշխատանքի հերոսների թիվը մեծ է մեր Փաբրիկներում և գործարաններում:

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՊԱԼԱՏ

Նայեցեք այս նկարի վրա: Ինչ մեծ, ինչ գեղեցիկ շենք է: Իսկ բանվորական պալատն է: Նա գտնվում է Ռոստովում: Այդ պալատից քիչ հեռու գտնվում է շոգեկառքեր վերանորոգող մեծ գործարանը: Այդ գործարանում աշխատում են հազարավոր բանվորներ. դա՛ Լենգործարանն է:

Ափսոս վոր գործարանը չի կարող խոսել, թե չէ նա շատ հետաքրքիր պատմութիւն կպատմի ձեզ:



Այնտեղ, ուր այժմ կանգնած է պալատը, հեղափոխութիւնից առաջ հրապարակ էր:

Շատ տարիներ առաջ, այդ հրապարակում բանվորները կրուվում էյին ցարական զորքերի դեմ: Այդ կռիվներում շատ բանվորներ զոհվեցին:

Յեկավ Հոկտեմբերյան հեղափոխութունը և բանվորները վերջնականապես հաղթեցին:

Այժմ այդ հին հրապարակը չես ճանաչի:

Այդ հրապարակում կառուցված է Լենինի անվան գեղեցիկ պալատը:

Պալատը թատրոնի և կինոյի համար ունի ընդարձակ դահլիճներ: Ունի մեծ գրադարան, սեղանատուն, հանգստի սենյակ: Շատ սենյակներ կան խմբակների համար:

Բանվորական պալատի բարձր աշտարակի վրա ծածանվում է հաղթական կարմիր դրոշակը:

ՄԵՐ ԿՈՆՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՄԵՆՔ ԻՆՉ ՏԵՍԱՆՔ ԿՈՆՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ

(Պիտներների նամակը)

Մենք գնացել էյինք ընկ. Բուդյոննու անվան կոլտնտեսութիւնը:

Կոլտնտեսութիւնը ցանում է շատ ցորեն, յեգիպտացորեն, արևածաղիկ: Կոլտնտեսութիւններում կան մեծ պարտեզ և խաղողի այգիներ:

Կոլտնտեսութիւնը աշնանն ամենից շուտ կատարեց հացամթերումները:

Կոլտնտեսութիւնում շատ գյուղատնտեսական մեքենաներ տեսանք: Այդ մեքենաները շինվել են Սելմաշ գործարանում: Կոլտնտեսականները նրանց լավ են խնամում:

Ապա մենք գնացինք գոմերը: Այնտեղ շատ լույս է և մաքուր: Յուրաքանչյուր ձի իր տեղն ունի:

Զիապանները մրցում են իրար հետ: Աշխատում են, վոր ձիերը մաքուր լինեն և ժամանակին կերակրվեն:

Մեզ պատմեցին, վոր ձմեռը ձիապանների շարքը մի կուլակ եր անցել: Նա տաշտի մեջ ջուր լցնելիս թույն եր խառնել: Դրա պատճառով շատ ձիեր կոտորվեցին: Կուլակին ձերբակալեցին և դատեցին:

ԿՈՒՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՏՄԱԾԸ

— Յես Իվան Միրոնովիչ Շեսայուկովն եմ: Յես կազակ եմ: Յերբ յես հինգ տարեկան եյի, սազեր եյի արածացնում: Յերբ դարձա տասնյերեք տարեկան, արածացնում եյի Դենսկի ազգանունով կուլակի խոզերին: Իսկ 19 տարեկան հասակից յես սկսեցի արածացնել կուլակ Գուկլայի յեզներին: Աշխատում եյի նրա մոտ, վորպես բատրակ:

Յերբ սկսվեց հեղափոխությունը, սպիտակներն ուզում եյին ինձ տանել իրենց բանակը: Յես փախա նրանցից և դարձա կարմիր պարտիզան:

Յերկու տարի գտնվում եյի ռազմաճակատում: Կովում եյի սպիտակների դեմ:

Դրանից հետո վերադարձա ստանիցան: Այստեղ ուրիշ չքավորների և միջակների հետ սկսեցի կառուցել կոլտնտեսություն:

Կուլակները պայքարում եյին կոլտնտեսությունների դեմ: Նրանք փչացրին մեր կալսիչը և հրդեհեցին շտեմարանը:

Մի անգամ յես ուշ գիշերով վերադառնում եյի տուն: Նրանք անկյունից կրակեցին ինձ վրա: Ուժեղ կերպով վիրավորեցին: Յես յերկար ժամանակ պառկեցի հիվանդանոցում՝ մինչև առողջացա:

Հետագայում աշխատում եյի կոլտնտեսությունում բրիգադիրի պաշտոնով: Հարվածային աշխատանքիս համար ինձ պարգևատրեցին յերկու անգամ: Իսկ այժմ ինձ ընտրել են կոլտնտեսության նախագահ:

Մուժ գիշերին,
Լուռ գիշերին,
Քամին յելավ
Չոր ու դաժան:
Գաղտագողի
Մի սև սովեր,
Անցավ անա
Յանկապատը.—
Վառվեց լուցկին
Կայծը փայլեց.
Այրվեց ուժգին
Դեզը ցորենի.
Բոլորն ել իսկույն
Մի ակնթարթում,

Դուրս վագեցին,
Հավաքվեցին
Հրապարակ.
Իսկ Ֆեդոտը
Ամուր բռնած,
Քաշ է տալիս
Հրձիգողին:
Բոլորի առաջ
Կանգնած է անա
Թշնամին հայտնի.
Բոլորն ել հիմա
Իմացան նրան, վոր
«Ականափոր» նենգ
Կուլակն է դա:

ԴԵՐԵԿԱՅԻ ԲՐԻԳԱԴՐ

Գարունը յեկավ: Շատ աշխատանքներ կան կոլտնտեսությունում: Պետք է վարել և ցանել ցորեն, յեզիպտացորեն ու արևածաղիկ:

Դերեկայի բրիգադը դուրս է գալիս դաշտը: Նրա ամեն ինչը կարգին է: Զիերն առողջ են և կուշտ: Գուլթաններն ու տափանները պատրաստ են աշխատանքի: Յուրաքանչյուր կոլտնտեսական գիտե իր անելիքը:

Ահա բրիգադը կանգ առավ դաշտում: Դաշտակայանի վրա ծածանվում եր կարմիր դրոշմ:

Առաջին ակոսը վարում է ինքը՝ Դերեկան: Ակոսն ստացվեց ուղիղ լարի նման:

Կոլտնտեսականները հարգում են բրիգադիր Դերեկային: Նա բրիգադի լավ առաջնորդ է: Ամեն մեկին ոգևում է աշխատանքի ժամանակ:

Բայց ծուլերին չի սիրում Դերեկան: Հենց վոր նկատում է

մի ծուլի, իսկույն նա հավաքում է իր բրիգադի անդամներին և հարցնում.

— Ե՛, ի՞նչ անենք:

— Ծուլին կոլտնտեսութունից դուրս անենք, — պատասխանում են բոլորը:

— Ճիշտ է, — ասում է Դերեկան: Յե՛վ ծուլին կոլտնտեսութունից դուրս են անում:

Դերեկայի բրիգադը կոլտնտեսութունում ամենից լավ և ամենից արագ է աշխատում:

ԱՎԱԳ ԶԻԱՊԱՆ

Իլյա Միխայիլովիչը կարմիր պարտիզան է: Նա քաջորեն կռվում էր սպիտակ գեներալների դեմ:

Դուրս եր քաջում իր սուրը, մտրակում էր ձիուն և հարձակվում թշնամիների վրա: Իսկ նրա հետևից գնում էր ամբողջ շոկատը:

Իլյա Միխայիլովիչը իր ձիուն՝ Որլիկին, շատ էր սիրում: Լինում էին դեպքեր, յերբ նա իրեն զրկում էր հացից, շաքարից, իսկ Որլիկին անպաճառ կերակրում էր:

Այժմ Իլյա Միխայիլովիչը կոլտնտեսութունում ավագ ձիապան է:

Նա հարվածային է: Նայեցեք, ամեն ինչ կանոնավոր է նրա գոմերում: Ամեն տեղ լույս է և մաքուր: Չիբրը միշտ լողացրած են: Յուրաքանչյուր ձին ունի իր տեղը, իր կերամանը, իր խամութը, իր լծասարքը:

Այդ բոլորը շոկված է ամեն մի ձիու չափով: Այդպիսի լծասարքով ձին հեշտությամբ է աշխատում և իրեն հարմար է զգում:

Իլյա Միխայիլովիչը բարի և սիրալի մարդ է: Բայց իսկույն բարկանում է, յերբ նկատում է, վոր ձիերին վատ են կերակրել կամ լավ չեն մաքրել:

ԿՈՒՏՆՏԵՍՍՍՅԻՆ ԴԱՇՏԵՐԻ ՀԵՐՈՍԸ

Մեզ մոտ է գտնվում Առաջին կոննայա արմիայի անվան կոլտնտեսութունը: Այնտեղ է բնակվում կոլտնտեսուհի Յելենա Նիկիտիչնա Տկաչյովան:

Նա հովվի աղջիկ է: Առաջ նա բատրակութուն էր անում կուլակների մոտ:

Նա առաջինը մտավ կոլտնտեսության մեջ: Նա համարձակորեն կռվում էր կոլտնտեսության թշնամիների դեմ: Դրա համար կուլակներն ուզում էին նրան սպանել: Նրանք ուժեղ կերպով վիրավորեցին նրան:

Տկաչյովան շատ է սիրում իր կոլտնտեսութունը: Նա միշտ լավ է աշխատում: Նա ուրիշներին էլ սովորեցնում է բարեխղճորեն աշխատել:

Տկաչյովան նկատեց, վոր շտեմարանից գողանում են հացահատիկը: Իսկույն անհանգ տվեց:

— Պետք է ամուր պահպանել կոլտնտեսային հացահատիկը, — ասում էր նա ժողովում: Կոլտնտեսականները վորոշեցին ամուր կերպով պահպանել շտեմարանը:

Տկաչյովան կոլտնտեսութունում մանկամուտը կազմակերպեց: Նա նույնպես հոգ է տանում, վորպեսզի բոլոր կոլտնտեսականները գրել կարդալ սովորեն ու թերթեր կարդան:

Կոլտնտեսութունում լավ և հարվածային աշխատանք կատարելու համար, Տկաչյովան պարգևատրվել է Աշխատանքային Կարմիր դրոշ քանչանով:



ԲՄՐԶՐԱԳՈՒՅՆ ՊԱՐԳԵՎ

Կաբարդինո-Բալկարիայի կոլտնտեսականները ազնիվ կերպով աշխատում էին իրենց դաշտերում: Յե՛վ կոլտնտեսային ամեն մի աշխատանքում կոմունիստները նրանց ղեկավարներն էին:

Կաբարդինո-Բալկարիայի կոլտնտեսականները խիստ աշալըջու-
թյամբ պահպանում եյին իրենց կոլտնտեսութունները թշնա-
միններից: Նրանք յերբեք չէյին խնայում վոչ կուլակներին, վոչ
գողերին, վոչ ել ծուլերին:

Այդ պայքարումն ել կոլտնտեսականների առաջնորդները
կոմունիստներն եյին:

Այժմ դուք ինքներդ տեսե՛ք, թե կոլտնտեսականներն ինչպիսի
մեծ հաջողութուններ ձեռք բերին միայն մի տարում:

Գարնանը նրանք ժամանակին և՛ լավ ցանեցին իրենց դաշ-
տերը և՛ մաքուր քաղհանեցին բոլոր մոլախոտերը: Ամառը կոլ-
տնտեսական դաշտերը շատ առատ բերք տվին:

Կոլտնտեսականները արթուն կերպով պահպանում եյին
իրենց դաշտերը թշնամիներից և լրիվ հավաքեցին ամբողջ բերքը:

Նրանք առաջինն եյին, վոր բոլորից շուտ, այդ բերքից հացը
պետությանը հանձնեցին:

Շատ և լավ սերմացու լցրին կոլտնտեսական շտեմարանները:

Իրենք կոլտնտեսականները, իրենց ազնիվ աշխատանքի հա-
մար շատ հաց և ուրիշ մթերքներ ստացան:

Իսկ աշնանը նրանք նորից ժամանակին և լավ ցանեցին իրենց
դաշտերը:

Կոլտնտեսականների այդ մեծ հաջողութունների և հարվա-
ծային լավ աշխատանքի համար, Կաբարդինո-Բալկարիային
պարգևատրեցին Լենինի շքանշանով:

ՄԱՆԿԱՀՐԱՊԱՐԱԿ

Ստանիցայում ապրում եր կազակուհի Մարինա Շապոշնի-
կովան: Նա ուներ մի փոքրիկ տղա, Գրիշա անունով:

Մարինան վնաց դաշտ յեզիպտացորեն ցանելու: Գրիշային
թողեց տանը և ասաց:

— Խաղա՛, բայց տնից դուրս չգաս:

Մարինան աշխատում ե դաշտում: Մտածումնքի մեջ ե՛ չլինի՞
թե Գրիշային մի դժբախտութուն պատահի:

Ավարտեց աշխատանքը և շտապում ե տուն: Տեղ հասավ, վա-
զեց խճիթը, իսկ Գրիշան չկա:

Վախեցավ Մարինան: Սկսեց կանչել վորդուն.

— Գրիշա՛, Գրիշա՛:

Վոչ վոք չի պատասխանում: Մարինան վազեց հարևանների
մոտ և լաց ե լինում.

— Կորսվ Գրիշա:

Իսկ հարևաններն ասում են.

— Գրիշան մեզ մոտ ե: Նա խրճիթից դուրս եր յեկել ճա-
նապարհի վրա և քիչ եր մնացել ընկնի ձիերի սմբակների տակ:

* * *

Այդ շատ տարիներ առաջ եր: Այն ժամանակ վեռ կոլտն-
տեսութուններ չկային:

Այժմ ստանիցայում բոլորովին այնպես չե: Հիմա կոլտնտե-
սուհիները հանգիստ սրտով դաշտ են գնում: Նրանց յերեխա-
ները գտնվում են մանկահրապարակում: Այնտեղ լավ ե յերե-
խաների համար:

Մանկահրապարակը կազմակերպել ե կոլտնտեսութունը:

ՈՎ ԻՆՉՔԱՆ ՎԱՍՏԱԿԵՑ

Իվան Անդրեևիչը յեկավ կոլտնտեսության նախագահի մոտ
և բացարձակ ասաց:

— Այս ի՛նչ ե: Տինչենկո հարևանիս շատ հաց տվին, իսկ ինձ
քիչ: Դա ձի՛շտ ե:

— Հապա ցո՛ւյց տուր քո աշխատանքային գրքույկը, — ասաց
նախագահը:

Իվան Անդրեևիչը հանեց իր աշխատանքային գրքույկը: Նախագահը նա-
յեց գրքույկը և գլուխը շարժեց:

— Զե՛ վոր դու քիչ ես աշխատել, — կշտամբանքով ասաց
նա, — իսկ բոլոր կոլտնտեսութուններում այժմ գոյութուն ունի
մի կանոն՝ ով լավ և շատ ե աշխատում, նա ել շատ ե ստանում:

(Գեորգիևսկի ռալոնի կոլտնտեսուհիների նամակից, ընկեր Ստալինին գրած)

Մեր թանկագին բարեկամ, ընկեր Ստալին

Դուք ասացիք, վոր կանայք կոլտնտեսութիւններում մեծ ուժ են, վոր կանայք պետք է պահպանեն կոլտնտեսութիւնները և կառչեն նրանց: Դա իսկական ճշմարտութիւն է: Հենց այդպէս էլ է:



Ի. Վ. Ստալին

Մեզանում կանայք մեծ մասնակցութիւն են ցույց տալիս կոլտնտեսութեան բոլոր գործերում: Մեզանում այժմ կան կին տրակտորիստներ, կոմբայնավարներ: Կան կին բրիգադիրներ, հաշվետարներ, վարչութեան անդամներ:

Դուք ասացիք, ընկեր Ստալին, վոր մոտակա 2—3 տարիներում բոլոր կոլտնտեսականները ունենոր կլինեն: Ճիշտ է, արդեն ունենոր են դառնում, բայց մենք

գրանով կանգ չենք առնի: Առաջ կգնանք: Կյանքն էլ ավելի ուրախ և հարուստ կդառնա:

Քաղաքին մենք շատ հաց ու մթերքներ կտանք: Քաղաքից մենք կստանանք մեքենաներ և տեխնիկա: Մեր յերկիրը մենք կդարձնենք ծաղկած այգի:

Այժմ կին կոլտնտեսականները տղամարդկանցից պակաս գրագետ չեն: Առաջ իհարկե այդպէս չէր: Առաջ գյուղում դժվար էր պատահում գրագետ կին, այժմ դժվար է գտնվում անգրագետ կին:

Հիմա բոլոր յերեխաները սովորում են: Առաջ միայն քչերն

էին դպրոց գնում, իսկ մեծամասնութիւնն իր սմբողջ կյանքում մնում էր անգրագետ:

Մենք ունենք մանկամսուրներ, մանկահրապարակներ: Ամբողջ զարմանը և ամառը մեր յերեխաները դաստիարակվել են մանկամսուրներում և մանկահրապարակներում: Ծծկեր յերեխաների համար մանկամսուրներ կառուցվեցին նաև դաշտերում, վորտեղ աշխատում էին մայրերը:

Այդ բոլորից հետո ինչպէս չհետևենք կոլտնտեսութիւններին: Մենք հիշում ենք ձեր խոսքերը, ընկեր Ստալին, և պահպանում ենք կոլտնտեսութիւնները:

ԻՆՉՊԵՍ ԵՆ ԱՊՐՈՒՄ ՄԵՐ ՅԵՐԿՐԱՄԱՍՈՒՄ ՏԱՐԲԵՐ ԱԶԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԸ

ՈՎ Ե ԱՊՐՈՒՄ ՄԵՐ ՅԵՐԿՐԱՄԱՍՈՒՄ

Մեր յերկրամասում ապրում են վոչ միայն ռուսները: Յեթե Ռուստովից գնանք դեպի հարավ, գնացքը կհասցնի ձեզ բարձր լեռների մոտ: Այդ լեռներում և գետերի մոտ ապրում են ադիգեյցիները, չեչենները, ոսերը, կաբարդիները, բալկարները, ինգուչները չերքեսները, կարաչայցիները: Դրանք լեռնցիներ են: Դրանք մեր յերկրամասի ամենահին բնակիչներն են:

Մեր յերկրամասում ապրում են նաև շատ հայեր, գերմանացիներ, հույներ, հրեյաներ, կալմիկներ: Սրանք ավելի ուշ են այստեղ բնակչութիւն հաստատել:

Բոլոր ժողովուրդների աշխատավորները կազմում են մի ընտանիք: Նրանք միահամուռ կերպով աշխատում են գործարաններում, կոլտնտեսութիւններում և ընդհանուր ուժով աշխատում են սոցիալիստական շինարարութեան համար և բարելավում են իրենց կյանքը:

Շատ տարիներ սուաջ թագավորն սկսեց հողը խլել չեչեն-
ներից, կաբարդիներից, չերքեսներից, ոսերից և մեր յերկրա-
մասի ուրիշ լեռնցիներից:

Թագավորի զորքերը հարձակվում էին աուլների վրա, բար-
ու քանդ անում նրանց:

Լեռնցիներին քշում էին իրենց հայրենիքից:

Յերկար տարիներ լեռնցիները պաշտպանվում էին թագա-
վորի զորքերից:

Բայց նրանց ուժերը թուլացան:

Բացի այդ, լեռնցի իշխաններն ել իրենց հերթին սկսեցին
ոգնել թագավորին:

Լեռնցիները ջարդվեցին և անձնատուր յեղան: Ռուս և
լեռնցի իշխաններն ու կալվածատերերն սկսեցին միասին ճնշել
և թալանել լեռնցի չքավորներին:

Ծանր եր լեռնցիների կյանքը թագավորի ժամանակ: Նրանք
քիչ հող ունեյին ցանքսի համար: Քիչ էին և արոտավայրերը
անասունների համար: Մեծ եր նրանց կարիքը: Նրանց պահում
էին անգրազիտության մեջ: Նրանց համար դպրոցներ չէին
կառուցում:

ՏԵՐԸ ՅԵՎ ԲԱՏՐԱԿԸ

1.

Խարունը վորք ե: Նա վոչ հայր ունի և վոչ ել մայր:

Նստած ե Խարունը և լաց ե լինում:

— Լաց մի լինիր, — ասում ե հարուստ կուլակ Իդրիսը: Կապ-
դես ինձ մոտ: Յես ունեմ շատ վոչխարներ: Դու կլինես հովիվ:

Խարունը դարձավ հովիվ:

Ամեն առավոտ Իդրիսը նրան մի կտոր չոր հաց և մի կտոր
վոչխարի պանիր ե տալիս և ուղարկում ե բարձր լեռները: Այն-
տեղի խոտը լավ ե և հյուլթալի: Խարունը ախտեղ արածացնում ե
տիրոջ վոչխարները:

Նա առավոտը շատ շուտ ե գնում և վերադառնում ե արևը
մայր մտնելուց հետո:

Իսկ ամբողջ որվա համար նա ստացել ե այն մի կտոր չոր
հացը և մի կտոր վոչխարի պանիրը:

Խարունը միշտ քաղցած ե: Բայց նա լուում ե: Վախենում
ե տիրոջից:

2.

Անցավ հինգ տարի, անցավ տասը տարի, անցավ վերջապես,
տասնհինգ տարի: Իսկ Խարունն առաջվա պես հովիվ եր Իդրիսի
մոտ: Աշխատում եր անհույս և անապաստան:

Բայց ահա Խարունն զգաց, վոչ չի կարող այլևս աշխատել:
Նա մրսել եր լեռներում, և նրան տանջում եր տենդն ու ջերմը:

Խարունը վորոշեց իր վերջնական հաշիվը տիրոջից ստանալ:
Յեկավ նրա մոտ և ասաց.

— Դու դեռ ինձ վոչինչ չես վճարել իմ տասնհինգ տարվա
աշխատանքի համար: Ազատիր ինձ աշխատանքից և հաշիվս սուր:

— Ինչ կա վոր, յեթե ուզում ես գնալ, ստացիր հաշիվդ:
Հիշիր, թե ինչպես եմ միշտ հոգսդ
բաշել:

Յեվ նա Խարունին տվեց իր
ամենավատ վոչխարներից 14 հատ:

Քշեց Խարունն իր վոչխարնե-
րին և մտածում ե:

— Աշխատել եմ 15 տարի: 15
տարվա ընթացքում մեկ որ հան-
գիստ չեմ ունեցել: Յեվ ահա վաս-
տակել եմ 14 վոչխար: Չե՞ վոր
տարին մի վոչխար ել չի ստաց-
վում:

Խարունն իրեն վիրավորված զգաց: Գնաց մուլային գանգատ-
վելու: Իսկ մուլան ասաց.

— Աստված պատվիրել ե չքավորներին համբերել: Համբե-



բիւր և դու: Իսկ իմ լավ խորհրդի համար, կտաս ինձ յերկու վոչխար: Այդպէս և հրամայում որենքը: Դու այդ որենքին պիտի հպատակվես:

Մուլան ստացավ յերկու վոչխար և Խարունի մոտ մնաց 12 հատ: Խարունն ուզեց գանգատովել դատավորին, բայց միտքը փոխեց: Դատավորը նույնպէս կպահանջի յերկու վոչխար, իսկ ոգնել՝ չի ոգնի: Չե՞ վոր դեռ չի յեղել մի դեպք, վոր թագավորի դատավորն ոգնի լեռնցի չքավորին:

ԻՆՉՊԵՍ ԵՅԻՆ ԱՊՐՈՒՄ ԼԵՌՆՈՒՀԻՆԵՐԸ

Ծանր եր առաջ լեռնուհիները կյանքը:
Մուլաններն ասում եյին նրանց, վոր կինը տղամարդուն հալասար չպետք է լինի:

Յեթե խրճիթում տղամարդ գտնվեր, լեռնուհին իրավունք չուներ նստելու: Նա պարտավոր եր կանգնել տղամարդու առաջ: Տնտեսութեան մեջ բոլոր մանր աշխատանքները կատարում եյին լեռնուհիները:

Լեռնուհին իրավունք չուներ տնից դուրս գալ յերեսը բաց, չարսավով չըծածկած:

Լեռնուհիներին պահում եյին փակված: Իր աուլից դուրս նա վոչինչ չեր տեսնում: Բոլոր լեռնուհիներն անգրագետ եյին:

Հայրերը վաճառում եյին իրենց աղջիկներին:

Յեթե հայրը վորոշում եր աղջկան մարդու տալ, ապա փեսայից կանխապէս փող եր առնում դրա համար:

Յեվ աղջկան ամուսնացնում եր նրա հետ, վորին ինքն եր ուղում:



Աղջիկը նույնիսկ չգիտեր, թե ում հետ ե ամուսնանում: Նա պարտավոր եր լուռ հպատակվել հորը և անխոս կատարել նրա հրամանները:

Ծանր եր աշխատավոր լեռնուհու կյանքը թագավորի ժամանակ:

ԾԵՐՈՒՆԻ ԿՍԲԱՐԴԻՆՅՈՒ ՊԱՏՄԱԾԸ


Կյանքումս յես շատ բաներ եմ տեսել և շատ վիշտ ու կարիք եմ ունեցել:

Թագավորի ժամանակ մեզ քշեցին վայրի կիրճերը: Իսկ մեր հողերը տվին կուլակներին և կալվածատերերին, վորոնք շահագործում եյին գյուղացիներին: Խորհրդային իշխանութիւնը վերադարձրեց մեզ մեր հողերը: Այժմ այդ հողերի վրա մենք կազմակերպում ենք կոլտնտեսութիւններ:

Առաջ մեր փոքրիկ հողամասերը չանգոտում եյինք փայտե բլիշներով: Այժմ մեր կոլտնտեսութեան դաշտերի, տափաստանների վրա աշխատում են տրակտորներ: Կար ժամանակ, վոր մենք թւափառում եյինք իշխանական վոչխարների հոտերի հետ: Այժմ մեր կոլտնտեսութիւններում ունենք մեծ հոտեր:

Առաջ մենք գաղափար չունեյինք ֆաբրիկաների և գործարանների մասին: Հիմա մենք ունենք և՛ ֆաբրիկաներ, և՛ գործարաններ, և՛ ելեկտրական կայաններ:

Մեր դաշտերի ջուրը քիչ եր: Դաշտերը վատ բերք եյին տալիս: Խորհրդային իշխանութիւնը լեռնային գետերի ջուրը ջր-



րանցքները միջոցով բերեց մեր դաշտերը: Նրանք սկսեցին լավ բերք տալ:

Թագավորի ժամանակ մենք բոլորս ել անգրագետ եյինք: Մենք յերբեք մեր մայրենի լեզվով գիրք չենք ունեցել:

Իսկ այժմ մեր բոլոր յերեխաները սովորում են դպրոցներում: Մեր տղամարդիկ ու կանայք նույնպես սովորեցին գրագիտություն: Մենք ունենք մեր ակումբները և կինոն: Մեզ մոտ տըպփում է մեր թերթը:

Այժմ առևնեցիներ, բժիշկներ, գյուղատնտեսներ: Նրանցից շատերը մեր կաբարդիններն են:

Մեր աուլում կանգնեցրել են Վլադիմիր Իլիչ Լենինի արձանը:

Յուրաքանչյուր աշխատավոր լեռնցի սիրում է Լենինին: Մենք գիտենք, վոր Լենինն է կազմակերպել բոլշևիկների կուսակցությունը: Այդ կուսակցությունը մեզ ավեց խորհուրդները և նոր կյանք:

ԲԵԿ-ԱԼԻ ՀՈՎՎԻ ՅԵՐԳԸ

Յես հովիվն եմ Բեկ-Ալի,
Յերգ եմ յերգում սարերի.
Չայնիր, սրինգ իմ, ձայնիր,
տրի, լի, լի...

Յերկնքում աստղեր են փայլում,
Հաշվով անթիվ, անհամար.
Մանուկներ շատ կան աշխարհում,
տրի, ըա, ըա...

Առաջ ճնշում եր ցարը,
Կեղեքում կուլակ, մոլլան,
Ծեծում եր կնյազը մտրակով.
ոյ, լա, լա:

Այժմ լույս է աուլում,
Ունենք բառգիրք, տրակտոր:
Կնյազների անուաններն ել չմաց,
Տրա, լա, լա...

Չայնիր, սրինգ իմ, ձայնիր,
Պատմիր աշխարհի մանուկներին
Խորհրդային յերկրի մասին,
Ուր ապրում է, բոյ է քաշում
Հովիվ Բեկ-Ալին—

Տրի, լի, լի...

ՄՈՒՐԱԴ ԲԱՇԱՅԵՎ

Ձեչենների աուլում ապրում եր չքավոր Մուրադ Բաշակը:
Այնպես պատահեց, վոր Բաշակը գնաց Գրոզնի:

Այդ դեռ թագավորի ժամանակն էր:
Գրոզնիում Մուրադը գնաց նավթահանքերը: Նա տեսավ, թե
ինչպես են այնտեղ աշխատում և ասաց ավագ վարպետին:

— Ընդունեցեք ինձ աշխատանքի: Աուլում յես շատ չքավոր
եմ ապրում, Սոված եմ: Իսկ այստեղ յես կվաստակեմ մի
կտոր հաց:

Վարպետը քմծիծաղ ավեց:
— Մենք չեչեններին չենք ընդունում, — ասաց նա, — Ինչ-
ներինս ես դու պետք, վերադարձիր քո աուլը:

Մուրադը նայեց վարպետին, շուռ յեկավ և գնաց:
Յերկրորդ անգամ նա Գրոզնի գնաց խորհրդային իշխանու-
թյան ժամանակ: Նա համարձակ կերպով մտավ նավթահան-
քերի գրասենյակը և ասաց:

— Յես չեչեն եմ: Խորհրդային իշխանությունը շատ լավու-
թյուններ է անում չեչեններին և ուրիշ լեռնցիներին: Յես չը-
քավոր եմ, ուզում եմ ոգնել խորհրդային իշխանությանը: Յես
գիտեմ, վոր յերկրին նավթ է պետք: Ընդունեցեք ինձ աշխա-
տանքի:

— Ուրախութեամբ, — պատասխանեցին նրան, — ուրախութեամբ կնդունենք քեզ, ընկեր Բաշա:

Մուրադին շրջապատեցին և սեղմեցին նրա ձեռքը:

Այսպես նա դարձավ Գրոզնու նավթային արդյունահանութեան բանվոր:

ՄՈՒՍՍՆ ՅԵՎ ՀԱՅՐԸ

Փոքրիկ Մուսսան գալոցից ուրախ տուն վազեց: Այսօր նրան սոր գրքեր էին տվել:

— Նալիր, հայրիկ, լավ գրքեր են: Յեվ բոլորն ել մեր ազիգեյան լեզվով: Ի՞նչքան զանազան նկարներ կան նրանց մեջ: Ահա աուլը, դպրոցը: Ահա և վոչխարները, գոմեջները և շյապով ու յերիճադով հովիվը: Նա բոլորովին նման է մեր կուտնտեսութեան անդամ Աբրահիմ պապիին:

Լսում է Մուսսայի հայրը և ասում է նրան.

— Մուսսա, քեզ համար լավ է խորհրդային դպրոցում: Իսկ մենք մեծանում էյինք, ինչպես մութ կիրճում. չունեյինք վոչ գրքեր և վոչ ել դպրոց:

ԼԵՌՆՈՒՀԻՆ ԴՊՐՈՅՈՒՄ

Ընդարձակ խրճիթում վառվում է մեծ լամպը: Մեկը մյուսի հետևից մտնում են լեռնուհիները, նստում են սեղանի մոտ, դասավորում են գրքերը, տետրակները:

Ահա մտնում է Խասինաթը: Նա գրկել է փոքրիկ Ալուն, իսկ նրա շորից բռնել է հինգ տարեկան Սալամեն:


— Մարզ չկա տանը, վորի մոտ թողնենք յերեխաներին, — վախվիսելով ասում է Խասինաթը: Յես նրանց բերել եմ հետս:

— Յեվ շատ լավ ես արել, — ասում է ուսուցչուհին: Նրանք կխաղան այստեղ մանկական անկյունում:

— Այստեղ, այստեղ տվեք յերեխաներին, — քաղաքավարի կերպով ասում են յերկու աղջկերք՝ Զարեն և Մերեմը: Մենք այսօր հերթապահ ենք: Մենք խնամելու և զբաղեցնելու յենք յերեխաներին:

Փոքրիկ Ալին սկզբում չի ուզում հեռանալ մորից: Բայց մի քանի ըրպեյից հետո նա արդեն սարքում է խորանարդները, և նրա սև աչքերը փայլում են բավականութունից:

Իսկ մայրը նստած է սեղանի կողքին և մի ինչ վոր բան է գրում տետրակում:



ՆՈՐ ՔԱՂԱՔ


Նայեցեք նկարին:

Սա Միկոյան-Շահար քաղաքն է: Առջևից հոսում է արագահոս գետը, իսկ նրա թիկունքում կանգնած են բարձր լեռները:

Այդ քաղաքը կառուցված է յերկու տարում: Այստեղ կան քարե մեծ տներ: Փողոցներում վազվզում են ավտոմոբիլներ:

Յերեկոները վառվում են ելեկտրական լապտերներ, վորոնք պայծառ լույսով լուսավորում են փողոցները:

Կարաչայցիները առևններից ամեն որ գալիս են քաղաք և գնում են քաղխորհուրդ, կոպեքատիվ, հիվանդանոց: Իսկ առաջ նրանք իրենց քաղաքը չունեյին:



Բարձր լեռների արևոտ ուսին
 Դադստանի ու Կաբարդայի,
 Հին առևններում դպրոցն է ծաղկում:
 Առավոտյան վաղ Իլյանն է վազում,
 Գիրքն ու տետրակը թևի տակ գրկած,
 Դեպի դպրոցը աչքը չորս արած:
 Ահա և բարձր բաբաշեն մի տուն,
 Թիթեղյա կտուր արևից փայլուն,
 Պատուհանները լուսավոր, կարգին —
 Մեր դպրոցն է այդ աշխատանքային:

ԻՆՉՊԵՍ ԱԼԻՆ ՎԵՐԱԴՄՐՁԱՎ ԱՌԻՂ

Թագավորի ժամանակ չեչեն Ալին վատ եր ապրում: Նա վորոշեց գնալ մի ուրիշ յերկիր՝ Թյուրքիա:

Հասավ նա Թյուրքիա և այնտեղ սկսեց ապրել: Ապրեց կես տարի և ասում է.

— Ե՛հ, այստեղ ել վատ է: Յերևում է, վոր ամեն տեղ ել վատ է, քանի վոր իշխանությունը բուրժուանների ձեռքումն է:

Անցան շատ տարիներ: Յե՛վ անա Ալու քրոջ աղջիկը նամակ է գրում նրան. «Վերադարձիր: Մեզ մոտ վերջացավ թագավորի և բուրժուանների իշխանությունը: Մեզ մոտ այժմ խորհուրդների իշխանությունն է»:

Ալին մենակ մարդ եր: Նա հավաքեց իր բոլոր իրերը, նավ նստեց և յեկավ:

Նրա սիրտը ուրախ բաբախում եր, յերբ իջավ նավից:

Նախ գնացքով և ապա ձիով նա հասավ հայրենի աուլը:

— Զարմանալի յե, — ասաց Ալին, մոտենալով աուլին, — առաջ այստեղ դժվար եր նույնիսկ ձիով գնալ, իսկ այժմ տեսնում եմ լավ սալահատակած ճանապարհ:

Բայց անա և աուլը: Ալին բոլորովին չճանաչեց նրան: Առաջ աուլում միայն մի աղյուսե տուն կար: Այնտեղ բնակվում եր

մուլան: Իսկ իրենք՝ լեռնցիները, բնակվում եյին վատ, նեղ խրճիթներում: Իսկ այժմ Ալին տեսնում է շատ լավ տներ:

— Ի՞նչ է այս մեծ տունը, — հարցրեց նա:

— Դպրոց է:

— Ձի կարող պատահել, — գարմացավ Ալին, — մեզ մոտ յերբեք դպրոց չի յեղել:

— Ահա և մի ուրիշը, — ցույց տվին նրան, — մեր բոլոր արդաներն ու աղջիկները սովորում են դպրոցներում:

— Ի՞նչպես: Աղջիկները նույնպե՛ս, — վեր թռավ Ալին և քիչ մնաց կառքից ընկնի, վորի մեջ նստած գնում եր: Յե՛վ աղջիկները, — կրկնեց նա գարմացած:

— Այո, և բոլոր աղջիկները սովորում են, — հանգիստ պատասխանեցին նրան:

— Այդ արդեն հիանալի յե, — ասաց Ալին: Իսկ սա՛ ինչ տունն է, — ձեռքով ցույց տվեց նա դեպի աջ:

— Դա յել աուլի խորհուրդն է: Այնտեղ է գտնվում և դատարանը: Խորհրդում և դատարանում խոսում և գրում են մեր մայրենի լեզվով:

Այդ ժամանակ կառքը կանգ առավ այն փոքրիկ տան առջև, վորտեղ ապրում եր Ալին: Նրա քրոջ աղջիկը՝ Փաթման դուրս վազեց դիմավորելու:

— Գեռի, — ուրախ կանչեց նա, — քեռի Ալի:

— Փաթմա՛, միթե այդ դ՞ու յես, — բացականչեց Ալին:

Փաթման ուրախ ծիծաղեց:

— Յես, — ասաց նա, — սովորում եմ Ռոստովում: Յես շուտով բժիշկ կլինես:

Ալին չիմացավ, թե ինչ պատասխանի: Չէ՛ վոր նա ինքը յեղել է չքավոր: Յե՛վ այն բոլորը, ինչ վոր նոր է, խորհրդային է՝ հարազատ է նրան:

— Փաթմա՛, — ասաց նա կամաց ձայնով, յես բոլորովին չըճանաչեցի մեր Չեչնիան:

— Սպասիր, քեռի, — ասաց Փաթման, — դնանք այն տունը, յես քեզ դեռ շատ ուրիշ բաներ ցույց կտամ:

Ալին տեսավ շատ փոքրիկ յերեխաներ: Բսան աղջիկ և քսան տղա: Սենյակը մաքուր էր: Յերեխաները նստել էին ցածր, յերկար սեղանի շուրջը: Բոլորն էլ հագած էին սպիտակ շորեր: Նրանք նախաճաշում էին:

- Սա մանկամուտն է,—ասաց Յաթման:
 - Կազմակերպել է մեր կոլտնտեսուկթյունը:
 - Կոլտնտեսուկթյուն,—գանգաղ կրկնեց Ալին: Կոլտնտեսուկթյուն... մանկամուտը...
- Յեվ նա ուրախ ծիծաղեց:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

	Եջ	Եջ	
Չ Մ Ե Ի			
Չհաջողվեց	3	Հողային լիկններ	18
Մեր ձմեռը	4	Խլրբածղրիգ	18
Բուքը տափաստանում	4	Կոլտնտեսային այգում	19
Աղվեսն ու ժանտաքիսը	4	Աշնանն անտառում	19
Աղվեսն ու մուկը	5	Դպրոցական պարտիզում	21
Վայրի թռչունները ձմեռը	5	Ինչպես պատրաստեցին խա- ղողի այգին ձմռանը	22
Սև ծովի ափերին	6	Պուրակում	22
Գ Ը Ր Ո Ւ Ն			
Գարնան	7	Ինչպես մենք քշեցինք նա- պաստակներին	24
Տափաստանում	7	Մ Ե Ր Կ Ե Ն Ի Ա Ն Ի Ն Ե Ր Ը Յ Ե Վ Թ Ռ Զ Ո Ւ Ն Ե Ր Ը	
Առվակներին աշխատանքը	7	Յեզներ և գոմեշներ	23
Վերադարձան տաք յերկրներից	8	Եջ	24
Դոն գետի վարարումը	9	Ուղտ	25
Տափաստանը գարնան	9	Վոչխարներ	26
Այգին ծաղիկների մեջ	10	Լեռնային արտավայրում	26
Սպիտակ աղացիա	10	Չկարողացավ ոգտվել	28
Մեր խաղողը	10	Վայրի կատուն և լուսանը	28
Պարտիզի ընկերները	11	Յեղջերու	28
Ը Թ Ո Ւ Ն			
Աշնանը տափաստանում	12	Փոքրիկ, բայց խորամանկ	30
Յերինջակ	13	Լեռնային անտառում	31
Այգեկուկ	13	Անտառի ֆրասասատուները	32
Բամբակի առաջին հավաքումը	14	Պոնտական մկներ	33
Բանջարանոցում	14	Տափաստանային մուկ	33
Կոունկ	15	Ոձը և մուկը	34
Թռչունների չուն	16	Կերցրած պոչը	34
Բոստանում	16	Վայրի թռչունները	34
Չվարձալի խաղ	17	Վոչ մի կերպ չես համսի	35
Մոլախոտեր	17	Լեռնային արծիվ	35
		Լեռնային հնդկահավը	36
		Շարպիկ ձկնորսներ	37

ԹՈՎ ՅԵՎ ԳԵՏԵՐ

Վարարում 37
 Գարնանային վորս 37
 Լեռնային գետեր 38
 Թերեր 40
 Ճամբարներում 41
 Ծովի ափին 41

ՄԵՐ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԸ

Սելմաշ 42
 Մերենաները կոլտնտեսու-
 թյուններին 42
 Մերենաները կոլտնտեսու-
 թյունում 43
 Վորտեղ են արդյունահանում
 ածուխը 44
 Գործարաններին ածուխ . . . 44
 Մեր նավթը 45
 Ով է մեզ կոշկեղեն տալիս . 46
 Արևածաղկի յուղ 47
 Գործարան Բեսլանում . . . 48

ԻՆՉՊԵՍ ԵՏԻՆ ԱՊՐՈՒՄ ԲԱՆՎՈՐՆԵՐԸ
ԹԱԳԱՎՈՐԻ ԺԱՄԱՆԱԿ

Ինչպես էլին ապրում շախ-
 տյորները 59
 Այսպես է յեղել առաջ 49
 Ծեր բանվորի պատմածը . . . 49
 Բանվորուհու պատմածը . . . 50

ԻՆՉՊԵՍ ԵՆ ԱՊՐՈՒՄ ԲԱՆՎՈՐՆԵՐՆ
ԱՅԺՄ

Բանվորական ավանում . . . 51
 Բանվորների տունը 51
 Հանգստացավ 52
 Ֆարբիկ - խոհանոց 52
 Բանվորուհի Կարտաշովան . . 53
 Բանվորական պալատ 54

ՄԵՐ ԿՈՒՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մենք ինչ տեսանք կոլտնտե-
 թյունում 55
 Կոլտնտեսության նախագահի
 պատմածը 56
 Գիշեր 57
 Դերեկայի բրիգադը 57
 Ավագ ձիապան 58
 Կոլտնտեսային դաշտերի հե-
 բոսը 59
 Բարձրագույն պարգև 60
 Մանկահրապարակ 60
 Հարվածային Տիշչենկոն . . . 61
 Ով ինչքան վաստակեց . . . 61
 Պահպանում ենք կոլտնտեսու-
 թյունները 62

ԻՆՉՊԵՍ ԵՆ ԱՊՐՈՒՄ ՄԵՐ ՅԵՐԿԱՐ-
ՄԱՍԻ ՏԱՐԲԵՐ ԱԶԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԾԽԱՏԱՎՈՐՆԵՐԸ

Ով է ապրում մեր յերկրա-
 մասում 63
 Լեռնցիներին ինչպես նվա-
 ճեց թագավորը 64
 Տերը և բատրակը 64
 Ինչպես էլին ապրում լեռ-
 նուհիները 66
 Ծերունի կաբարդինցու պատ-
 մածը 67
 Բեկ-Ալի հովվի յերգը 68
 Մուրատ Բաշայեվ 69
 Մուսսան և հայրը 70
 Լեռնուհին դպրոցում 70
 Նոր քաղաք 71
 Լեռնային առևտրում 72
 Ինչպես Ալին վերադարձավ
 առև 72





« Ազգային գրադարան »
NL0240231

Գ Ի Ն Ը 55 ԿՈԳ.

ԿԱԶՄԸ 35 ԿՈԳ.

2074 43

8398

На армянском языке

Վ. Կ. ՅԱԳՈՐՏԿԱՅԱ, Ս. Ն. ԿՅՈՎԼԵՎ
ԿՐԱԵՎԱԿԱ ՍԵՑԻՆԱԿԱ ԿՆԻԳԱ
ԸՆԴ ՆԱՇԱԿՆԱԿԱ ՍԿՈՒԼ
ԱՅՈՎՈ-ՇԵՐՈՄՈՐՏԿՈՅ
Ի ՏԵՎԵՐՈ-ԿԱՎԿԱՅՏԿՈՅ ԿՐԱԵՎ
ՎՍՄԱՐԿ Ի

ԱՅՈՎՈ-ՇԵՐՈՄՈՐՏԿՈՅ ԿՆԻԳՈՒՅԸՆԱԿԱԿՈՒՅԸ

ԳՐԱԳՈՒԼՏՈՒՅԸ

ՈՒՍՏՈՎ-ԴՈՆ ՍՈՍՎՈՎՍՎԱՍՏԱ ՓՈՂ. № 58

ԳՐԱԿԵՆՏՐՈՆ (ԿՆԻԳՈՑԵՆՏՐ)